ISSN 1829-0469

ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

# ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (215)

#11 Նոյեմբեր 2023

Գ Ի Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ

## Փաշինյանական սուր ու անվիզում բանավեճերը բարեկրթության, մտավորականի պահվածքի, գիտնականի արժանապատիվ կեցվածքի դասեր են եղել

*Գիտաժողով՝ նվիրված Էդուարդ Փաշինյանի ծննդյան 100-ամյակին*

4



*Ծովինար Մովսիսյան*

Տարին հագեցած է արվեստի և մշակույթի անվանի գործիչների հոբելյաններով, որոնք նշվում են տարբեր ծավալի միջոցառումներով՝ գիտաժողովներ, փառատոներ, համերգներ և այլն: Օրերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության համատեղ նախաձեռնությամբ միության դահլիճում կայացավ երաժշտագետ, մանկավարժ, կոմպոզիտոր, ԵՊԿ պրոֆեսոր Էդուարդ Փաշինյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողով:

## Կայացավ ամենամյա «Կոմիտաս» միջազգային փառատոն-գիտաժողովը

3




*Միեր Նավոյան, Լիլիթ Երնջակյան, գիտաժողովի մասնակիցներ, ունկնդիր*

## Կայացավ ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովը

2




*Արմենուհի Բաբլոյան, Ծովինար Մովսիսյան, Նինա Հայրապետյան, Ռիտա Աղայան, Նարինե Ավետիսյան, Աննա Խաչատրյան, ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովի մասնակիցներ*

## *Հարություն Դելլալյանի անվան երիտասարդ կոմպոզիտորների 2-րդ մրցույթի հաղթողները*




2

## Երաժշտական անսուդարանը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում



6

## *30 տարի բեմում. «Փարոս» կամերային երգչախմբի հոբելյանական համերգը*



*Երևանի Արմեն Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբ, խմբավար Ռուբեն Կարասեֆերյան, «Փարոս» կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Րաֆֆի Միքայէլեան, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան, մենակատարներ՝ Լուիզա Երեմյան, Հարություն Խաչատրյան, Անի Սիմոնյան, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Րաֆֆի Միքայէլեան*

9

## Կայացավ ԵՊԿ ՈՒԳՍԸ Գիտաժողովը

1 Հայաստանի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ, նոյեմբերի 21-ին, կայացավ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված ՈւԳՍԸ գիտաժողովը:

Ռեկտոր Սոնա Հովհաննիսյանն իր խոսքում ընդգծեց, որ կարևոր է գիտության մեջ նույնպես նշել՝ «կարևորել, շնչառություն տալ» «Արամ Խաչատրյան» իրական մարդուն՝ մեր հանճարին: Այս գիտաժողովը ամբողջացում և գիտական շերտ է ստեղծում «Արամ Խաչատրյան 120» ծրագրի ընթացքին:

Առաջին օրը նիստը մեկնարկեց գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանի բարեմաղթանքով: Նա ուրախությամբ նշեց, որ այս անգամ ուսանողական գիտաժողովին մասնակցության հայտ է ներկայացրել շուրջ երեք տասնյակ ուսանող:

Մեր հյուրերն էին Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական համալսարանի, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի, Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական քոլեջի, Ռ. Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի ուսանողները և նրանց ղեկավարները:

Օրվա թեմաների հերոսն Արամ Խաչատրյանն էր՝ իր կերպարով ու ստեղծագործությամբ:

Խաչատրյանի երաժշտաբեմական ժառանգությունը դիտարկվեց տեսական վերլուծության փորձով, ակադեմիական երաժշտությունն այսօր հանրայնացնելու լավագույն օրինակով, հնչյունային կինոյի ծննդից մինչ օրս ժամանակակից ֆիլմարտադրության մեջ չդադարող արդիականությամբ: Ներկայացրեցին Խաչատրյան-գեղարվեստ (կերպարվեստ ու քանդակագործություն) զուգահեռները՝ կոնկրետ և ամփոփ անդրադարձներով:

Այլ թեմաներով զեկուցումների մեջ տեղ էին գտել մանկական հոգեբանության և երաժշտական կրթությանը վերաբերող դիտարկումներ, էպիստոլյար ժանրի միջոցով անդրադարձ: Երաժշտատեսական ուսումնասիրությունները ներկայացվեցին ժամանակակից կոմպոզիտորի ստեղծագործության օրինակով, խոսքի և երաժշտության փոխհարաբերության, ինչպես նաև էթնոերաժշտության մեթոդներին առնչվող թեմաներով:


Սոնա Հովհաննիսյան


Ծովինար Մովսիսյան, Վովա Արզումանյան


Արտյոմ Անդրեասյան


Էլլադա Մաթևոսյան

*Նյութը քաղված է*
*https://www.facebook.com/YerevanStateConsevatory էջից*

## Հարություն Դելլալյանի անվան երիտասարդ կոմպոզիտորների 2-րդ մրցույթի հաղթողները


Ժան-Միշել Արոյան, Թերեզա Մարկոսյան


Մերի Շարբաթյան, Միքայել Նավասարդյան


Իվանե Եսայան, Էլեն Աղամյան,


Մերի Շարբաթյան, Սոնա Թուրաբյան

1 Հոկտեմբերի 24-ին, ԵՊԿ Ղազարոս Սարյանի անվ. օպերային ստուդիայում ամփոփվեց հայտնի կոմպոզիտոր Հարություն Դելլալյանի անվ. երիտասարդ կոմպոզիտորների 2-րդ մրցույթը: Համերգի ընթացքում հնչեցին պարգևատրված 4 ստեղծագործությունները և հանձնվեցին մրցանակները: Մրցույթի համակարգողներն են Կոմիտասի անվ. պետական պետկոնսերվատորիայի պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանը, կոմպոզիտորի ընտանիքը՝ ի դեմս նրա դուստրերի՝ դաշնակահար Մարինա Դելլալյանի և ջութակահար Նարինե Դելլալյանի: Մրցույթի այս տարվա հանձնախմբի անդամներն էին՝ Միխայիլ Կոկժաևը, Լևոն Էսկենյանը, Դավիթ Պողոսյանը և Աշոտ Ղազարյանը: Նշենք, որ մրցույթին կարող էին մասնակցել ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնի բակալավրականի, մագիստրոսականի, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերով սովորող բոլոր ուսանողները: Ստեղծագործությունը պետք է գրված լիներ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում՝ մեկ փողային կամ լարային գործիք և դաշնամուր գործիքային կազմով, 5-7 րոպե տևողությամբ:




Մրցույթում 1-ին մրցանակին արժանացավ Գոռ Իսպիրյանը (ղեկ.՝ Արամ Հովհաննիսյան, «Երկխոսություն» ջութակի և դաշնամուրի համար, կատարեցին՝ Ժան-Միշել Արոյանը, ջութակ, Թերեզա Մարկոսյանը, դաշնամուր), 2-րդ մրցանակին՝ Միքայել Վարդանյանը (ղեկ.՝ Ստեփան Ռոստոմյան, «Սոնատինա ալտի և դաշնամուրի համար», կատ.՝ Սոնա Թուրաբյանը, ալտ, Մերի Շարբաթյանը, դաշնամուր) և Ռալֆ Քեօշքարեանը (ղեկ.՝ Արամ Հովհաննիսյան, *«The Bridge»* թավջութակի և դաշնամուրի համար, կատ.՝ Միքայել Նավասարդյանը, թավջութակ, Մերի Շարբաթյանը, դաշնամուր), 3-րդ՝ Արեգ Գալոյանը (ղեկ.՝ Ստեփան Ռոստոմյան «Այն, Նա» ջութակի և դաշնամուրի համար, կատ.՝ Իվանե Եսայանը, ջութակ, Էլեն Աղամյանը, դաշնամուր):

Պորտուգալաբնակ Նարինե Դելլալյանի հավաստմամբ, հաջորդ տարվանից պատրաստվում են ընդլայնել մրցույթի շրջանակները, այն դարձնել միջազգային և իրականացնել պորտուգալական կոնսերվատորիայի հետ համատեղ:

*Նյութը պարաստեց՝*
**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

# Կայացավ ամենամյա «Կոմիտաս» միջազգային փառատոն-գիտաժողովը

1 Սույն թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 8-ը ամենամյա «Կոմիտաս» միջազգային փառատոն-գիտաժողովը տեղի ունեցավ մեր ժողովրդի համար չափազանց ծանր և դժնդակ օրերին: Արցախի հայաթափման լուրը հերթական անգամ թևաթափ արեց մեր հանրությանը՝ առաջացնելով լարված և հուսահատ տրամադրություններ:

Այս հանգամանքներում, բնականաբար, մշակութային միջոցառումների ստվար մասը չէր կարող ընթանալ նախապես ծրագրված ուղով, սակայն, այնուամենայնիվ, մշակույթի նվիրյալներն ու գիտական մշակներն ուժ գտան շարունակելու իրենց առաքելությունը:

Կոմիտաս Վարդապետի ծննդյան 154-ամյակի առթիվ, Տ. Ասողիկ աբեղա Կարապետյանը սեպտեմբերի 26-ին հոգեհանգստյան կարգ կատարեց Կոմիտասի պանթեոնում՝ «Գեղարդ» երգեցիկ խմբի մասնակցությամբ: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ԿԹԻ) աշխատակազմը, մի խումբ մշակութային գործիչներ և արվեստասերներ ծաղիկներ խոնարհեցին Վարդապետի շիրիմին: Արարողության ավարտին կոմիտասյան կատարումով ելույթ ունեցավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ՀՀ Ազգային հերոս, ՀՀ վաստակավոր գործիչ Հովհաննես Չեքիջյան:

Հաջորդ օրերին փառատոնային համերգաշարն ընդգրկել էր Իսադորա Ջիհմ Կինի մենահամերգը (դաշնամուր, Հարավային Կորեա), Հայաստանի Ազգային ակադեմիական կապելլայի, Կոմիտասի անվ. լարային քառյակի, «Սաղմոսերգու» հոգևոր երաժշտության արական երգչախմբի (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահե Բեգոյան) և «Գեղարդ» երգեցիկ խմբի (գեղարվեստական ղեկավար՝ Միեր Նավոյան, խմբավար՝ Անահիտ Պապայան) ելույթները: Հոկտեմբերի 8-ին կոմիտասյան Պատարագի կատարմամբ փառատոնը եզրափակեց Երևանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Քրիստինա Ոսկանյան):

Հոկտեմբերի 7-ին և 8-ին գումարված միջազգային գիտաժողովն ընդգրկում էր բավական թվով զեկուցումներ՝ նվիրված Կոմիտասի անձին, գործունեությանն ու ստեղծագործական ժառանգությանը: Առաջին գիտական նիստին (նախագահող՝ Լիլիթ Երնջակյան) ելույթներ ունեցան Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Միեր Նավոյանը՝ «Կոմիտասի հարմոնիայի ձայնակարգային (մոդալ) բնութագրերը», ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝ Լուսինե Սահակյանը՝ «Կոմիտասի դերը հայ կանանց երաժշտական կրթության հարցերում», պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը՝ «Նախնադարյան մտածելակերպի տարրերը Կոմիտասի աշխարհայացքում», ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, ԿԹԻ գիտաշխատող Դանիել Երաժիշտը (Գրիգոր Դանիելյան)՝ «Նորահրաշ պսակավոր» թեմաներով:

Օրվա երկրորդ նիստին (նախագահ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյան) ելույթներ ունեցան արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ԿԹԻ գիտաշխատող Գայանե Ամիրաղյանը՝ «Վարդան Սարգսյանի դիտարկումները Կոմիտասի «Պատարագի» ձայնակարգային առանձնահատկությունների մասին», Հայաստանի ազգային պատկերասրահի հայ գեղանկարչության բաժնի վարիչ Հայկուհի Սահակյանը՝ «Կոմիտասի ստեղծագործությունների գեղարվեստական ձևավորումները», արվեստագիտության թեկնածու, ՀՊՄՀ դոցենտ, ԿԹԻ աշխատակից Աննա Ադամյանը՝ «Կոմիտասի պոեզիայի և դաշնամուրային գործերի որոշ զուգահեռներ լեզվի և երաժշտության ընդհանրությունների համատեքստում» թեմաներով:

Օրվա ավարտին տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում «Հայ հոգևոր երաժշտության XIX դարի ձայնագրությունների շուրջ» թեմայով՝ մասնակցությամբ Միեր Նավոյանի, արվեստագիտության թեկնածու, Մատենադարանի գիտաշխատող Արուսյակ Թամրազյանի և Լիսաբոնի Նոր համալսարանի երաժշտության, սոցիոլոգիայի և գեղագիտության հետազոտությունների կենտրոնի անդամ, փիլիսոփայության դոկտոր Հայկ Իւթիճեանի (Պրահա-Լիսաբոն):

Հոկտեմբերի 8-ին, երրորդ նիստի ընթացքում (նախագահ՝ ԿԹԻ գիտաշխատող Նանե Միսակյան) զեկուցումներ ներկայացրեցին ԿԹԻ գիտաշխատող, ԵՊԿ դասախոս Աստղիկ Մարտիրոսյանը և ԿԹԻ աշխատակից, Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս Ծովինար Արծրունին՝ «Ժանրային դասակարգման խնդիրները հայ գեղջկական որոշ երգերի օրինակով», արվեստագիտության թեկնածու, ԿԹԻ գիտաշխատող, երաժշտական գրադարանի մատենագիտության, ձայնագրության ու թվայնացման բաժնի վարիչ, ԵՊԿ դասախոս Լիլիթ Հարությունյանը՝ «Խմբավարի «Տասը պատվիրանքները». Կոմիտասի մտորումները դիրիժորական արվեստի շուրջ», ԿԹԻ աշխատակից Սոնա Սիմոնյանը «Պաուլ Բրունսի վոկալ-մեթոդաբանական գրքերը Կոմիտասի անձնական գրադարանում» թեմաներով:

Չորրորդ նիստում (նախագահող՝ Գայանե Ամիրաղյան) զեկուցումներ ներկայացրեցին արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանը՝ «Աշուղ Խայաթը և Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը», արվեստագիտության թեկնածու, ԿԹԻ գիտական բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ԵՊԿ դասախոս Տաթևիկ Շախկուլյանը՝ «Կոմիտասյան պոեզիայից մինչև կոմպոզիտորական արվեստ», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ԵՊԿ կառավարման գիտական խորհրդի ղեկավար Լիլիթ Երնջակյանը՝ «Ինքնության դրսևորումները Ալան Հովհաննես-Վիլյամ Սարոյան ստեղծագործական մտահղացումներում» թեմաներով:

Օրվա ավարտին տեղի ունեցավ կլոր սեղան՝ «Կոմիտասյան քնարերգություն. անգլերեն թարգմանության աշխատանքային գործընթացի» ներկայացմամբ: Մասնակցում էին Օքսֆորդի համալսարանի անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանող, ԿԹԻ կամավորության շրջանի ուսանակ Էլոիզ Փենիսթոնը, թանգարանի էքսկուրսավարներ Քնարիկ Ավետյանը, Նունե Ամիրխանյանը, Լիլիթ Հունանյանը, Դավիթ Սիմոնյանը և գիտական բաժնի ղեկավար Տաթևիկ Շախկուլյանը:



«Գեղարդ» երգեցիկ խումբ, գեղարվեստական ղեկավար՝ Միեր Նավոյան, խմբավար՝ Անահիտ Պապայան



Երևանի պետական կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Քրիստինա Ոսկանյան



«Սաղմոսերգու» հոգևոր երաժշտության արական երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահե Բեգոյան

Գիտաժողովի ավարտին Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ Միեր Նավոյանն իր խոսքում նշեց. *«Ճիշտն ասած, այս տարվա գիտաժողովը, մի փոքր անսպասելի ձևով, որոշ առումներով առանձնացավ՝ լավ իմաստով: Չի նշանակում, թե նախորդ տարիներին վատ գիտաժողովներ ենք ունեցել, բայց այս տարի շատ կային խի՛ստ նոր թեմաներով և խի՛ստ նոր հայեցակետերով ելույթներ: Մյուս կողմից՝ այս տարի գիտաժողովն անհամեմատ ավելի շատ էր կենտրոնացած հենց Կոմիտասի շուրջ, որովհետև մեր գիտաժողովը բաց է և կարող է անդրադառնալ երաժշտական արվեստի ամենատարբեր ճյուղերին ու երևույթներին, որոնք բոլորը կարող են կապվել Կոմիտասի հետ, այն իմաստով, որ Կոմիտասն այդ բոլոր ոլորտներում աշխատել է: Այսպիսի՛ն է տրամաբանությունը, և մենք այսպե՛ս ենք մոտենում հարցին: Նախորդ տարիներին, իհարկե, Կոմիտաս եղել է, և նույնիսկ խնդիր ենք ունեցել մեկ կամ երկու բաժին Կոմիտասին նվիրել, իսկ մնացած բաժինները կամ նիստերը տրամադրելու այլ թեմաներին: Այս տարի գրեթե ամբողջությամբ կոմիտասյան թեմատիկա էր՝ մեկ կամ երկու բացառությամբ: Եվ Կոմիտասի արվեստին, Կոմիտասի ժառանգությանը, գործունեությանը անդրադառնալիս այդքան նոր, այդքան նորովի մոտենալն ինքնին հետաքրքիր է: Սա շեշտել է տալիս, որ Կոմիտասի երևույթը հեշտ ըմբռնելի, պարփակելի չէ, և շատ հեռու ենք այն սպառած լինելու գաղափարից, և այսօր նույնիսկ հնարավոր է դառնում նրա գրադարանում պահվող գրքերի լուսանցքագրերով վերականգնել նրա տեսական հայացքները ոլորտների վերաբերյալ, որոնց վերաբերյալ ամբողջական աշխատություններ չունենք, բայց ինքը թողել է որպես որևէ գրքի, այսպես ասենք, հընթացս արված ռեցենզիա կամ դիտողություններ: Կամ, հակառակ ծայրահեղությամբ, էլի՝ կոմիտասական է, էլի՝ կոմիտասյան երևույթ է, երբ խոսվում է մեր արվեստակից գործընկերների կողմից կոմիտասյան հրատարակությունների ձևավորումների մասին: Սա՛ էլ կոմիտասյան թեմա է, գուցե ուղիղ կոմիտասագիտություն չէ, սակայն կոմիտասյան թեմատիկա է: Մի կողմից՝ նրա պոեզիային, նրա երաժշտությանը կամ առհասարակ, պոեզիային և երաժշտությանն առնչվող հարցերը, մյուս կողմից՝ նրա հարմոնիկ մտածողության ձևակերպումները: Այս բոլոր ոլորտներում, եթե չասենք բացարձակ նոր թեմաներ (թեև այդպիսիք կան և այս տարի իսկապես շատ են), ապա նորովի մոտեցում առնվազն կար գրեթե բոլոր ելույթներում: Այնպես որ, գոհունակությամբ եմ սա նշում, որ մեր երկրի, մեր Հայրենիքի համար ամենաբարդ իրականության մեջ՝ մտավորական մարդիկ, մտավոր աշխատանքի մարդիկ մխիթարություն կամ խնդրի լուծման ճանապարհ, էլի ինչ-որ բաներ տեսնում են հենց մտավոր աշխատանքի բնագավառում: Չէի ուզենա շատ բարդացնել, բայց եթե Հայդեգերի փիլիսոփայությամբ մոտենանք, Կոմիտասն իր արվեստով, իր մշակույթով, ինչ-որ իմաստով դառնում է մեզ համար գոյաբանական, էկզիստենցիալ ապաստան՝ այս մռայլ և կնճռոտ իրականությունից փոքր-ինչ շեղվելու և ստեղծարար իրականության մեջ ապրելու ճանապարհին…»:*

**ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ**

*https://azg.am/am/%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%A1%D5%BE-%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1*

## Փաշինյանական սուր ու անվիզում բանավեճերը բարեկրթության, մտավորականի պահվածքի, գիտնականի արժանապատիվ կեցվածքի դասեր են եղել

*Գիտաժողով՝ նվիրված Էդուարդ Փաշինյանի ծննդյան 100-ամյակին*

1

Հոբելյարի մասին խոսք խնդրեցինք կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու Ծովինար Մովսիսյանից, ով կարևորելով նման ծնաչափով անցկացվող միջոցառումները, նշեց, որ արվեստի, մշակույթի մեր երախտավորներին նվիրված հանդիսությունները ոչ միայն ծառայում են այդ անհատներին մեծարելու, նրանց կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու, հանրությանը ներկայացնելու շնորհակալ գործին, այլև ստեղծում են այն ամուր կամուրջները, որոնցով հաղորդակցվում են տարբեր սերունդներն ու ժամանակները, միահյուսվում են ավանդույթներն ու նոր մոտեցումները, գեղարվեստական փորձն ու տեսական մտահանգումները. *«Սակայն ամենից կարևորը կենդանի հիշողությունն է, մարդկային ջերմ ու անկեղծ նվիրումի արտահայտությունն այն ամենի նկատմամբ, ինչը մեզ համար անսահման թանկ է, արժեքավոր է ու հարատև»:*

*«Հսկայական է Էդուարդ Փաշինյանի ներդրումը հայ երաժշտատեսական մտքի զարգացման գործում: Ռոբերտ Աթայանի, Մարգարիտ Բրուտյանի, Նովալիս Դերոյանի և մյուսների հետ նա առաջիններից էր, որ հեղինակեց հարմոնիայի, պոլիֆոնիայի հայալեզու դասագրքերը, որպես խմբագիր մասնակցեց տարրական տեսության, վերլուծության դասագրքերի ստեղծմանը, որոնցում պարզ ու գրագետ հայերենով, մշակված տերմինաբանությամբ շարադրված են երաժշտատեսական կարևորագույն հիմնադրույթները»,* - հայտնեց մեր զրուցակիցը: Մանրամասնեց նաև, որ Փաշինյան տեսաբանի կարևորագույն հայտնագործությունը հայկական հիպերլադային ծայնակարգերի ուսմունքն էր, որի դրույթները համառորեն, կարելի է ասել՝ մոլեռանդորեն, պաշտպանում էր նա՝ հաղթահարելով ավանդական պատկերացումների իներցիայի, կարծրատիպային մտածողության դիմադրությունը: *«Ինչպիսի սուր ու անզիջում բանավեճերի ականատես ենք եղել..., սակայն դրա հետ մեկտեղ՝ գիտական վիճաբանության բարեկրթության, մտավորականի պահվածքի, գիտնականի արժանապատիվ կեցվածքի և գործընկերային հարաբերությունների ինչպիսի դասեր ենք քաղել...»,* - ասաց տիկին Մովսիսյանը: Անդրադառնալով հայկական հիպերլադային ծայնակարգերի ուսմունքին, մեր զրուցակիցը հավաստիացրեց, որ այսօր արդեն Փաշինյանի տեսադրույթները հիպերլադային համակարգի, հայ երաժշտության ծայնակարգերից բխող ուրույն հարմոնիկ լեզվամտածողության վերաբերյալ, կայացած իրողություն են հայ երաժշտատեսական մտքի տիրույթում և որպես առանձին դասընթացներ իրենց հիմնավոր տեղն են զբաղեցնում կոնսերվատորիայի հիմնական ծրագրերում և, որ ամենակարևորն է՝ այսօր ունենք իրենց ուսուցչին, իրենց դպրապետին նվիրված, նրա գործը շարունակողներ, որոնց շնորհիվ իր կենսունակությունն ու շարունակականությունն է հաստատում փաշինյանական դպրոցը:



*Էդուարդ Փաշինյան*

Զրույցի ընթացքում Ծովինար Մովսիսյանը մտաբերեց առաջին հանդիպումը պրոֆեսորի հետ. *«Կարծես երեկ լիներ, որ մեզ՝ առաջին կուրսեցիներիս, ներկայացավ այդ պատկառելի արտաքինով, բարձրահասակ, հաղթանդամ, ահեղ ծայնով դասախոսը, որի հետ երջանկություն ունեցանք ճանապարհ անցնելու ոչ միայն կոնսերվատորիայում ուսանելու տարիներին, այլև տասնամյակներ անց՝ արդեն որպես գործընկերներ»:* Հավաստիացրեց նաև, թե առաջին իսկ րոպեներից գրավիչ անհատականության անբացատրելի հզոր ներգործությամբ պրոֆեսորն իրենց փոխանցել է հարմոնիայի դասընթացի հանդեպ հետաքրքրություն ու վարակիչ ոգևորություն ու պրոֆեսորի յուրաքանչյուր դասը նոր բացահայտումների, հայտնագործումների աշխարհ էր, որի ընթացքում հարմոնիա ուսմունքը մատուցվել է ոչ թե դոգմատիկ կարծրատիպերով, այլ Փաշինյանի կողմից խրախուսվող համարձակ փորձարարություններով և ստեղծագործական ազատությամբ: *«Կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Փաշինյանն իր գործի գիտակ տեսաբան, հմուտ մանկավարժ լինելուց բացի, նաև կոմպոզիտոր էր, ով երաժշտությունն ընկալում ու մեկնաբանում էր ներսից: Եվ այդ ստեղծագործական ազատությունն իր դասերին առանձնակի հետաքրքրություն ու անկաշկանդություն էր հաղորդում: Իսկ դասերն անցնում էին ոգևորված երկխոսությունների, վիճահարույց իրավիճակների աշխույժ քննարկումների և պարզապես այդ պահին հնչող երաժշտության մասին մտքերի փոխանակման ձևով: Հենց այդ անկեղծության և անմիջականության շնորհիվ երաժշտագետների ու կոմպոզիտորների, գործիքային կատարողների ու դիրիժորների քանի՜-քանի՜ սերունդ իրենց ուսուցչի հանդեպ նվիրվածությամբ, պատկառանքի ու երախտագիտության անկեղծ զգացումով, անթաքույց հպարտությամբ խոստովանում են, որ եղել են Էդուարդ Ռուբենի Փաշինյանի սանը»,*- եզրափակեց Ծովինար Մովսիսյանը:

**ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ**
*https://www.aravot.am/2023/11/11/1381827/*

## *“ОН УЧИЛ НАС СМОТРЕТЬ ВГЛУБЬ МУЗЫКИ...”*




**В Союзе композиторов Армении почтили память одного из выдающихся деятелей отечественного музыкального искусства, заслуженного деятеля искусств Армянской ССР, профессора Эдуарда Пашиняна. В рамках прошедшего здесь научного форума, приуроченного к 100–летию со дня рождения музыковеда, участники и гости поделились воспоминаниями об Эдуарде Рубеновиче как о человеке особого склада, внесшем вклад в развитие теории музыки, и педагоге, ученики которого сумели добиться значительных достижений.**

**Организаторы научной конференции уделили внимание и композиторской деятельности Эдуарда Пашиняна. На форуме прозвучал ряд его произведений, по достоинству входящих в сокровищницу армянского музыкального наследия. Мероприятие прошло по инициативе Института искусств НАН РА, Союза композиторов Армении и Ереванской государственной консерватории им.Комитаса. Прозвучали как доклады по научным трудам Э. Пашиняна, так и личные истории, сохранившиеся в памяти его коллег и учеников.**

**Как отметила открывая форум член СКА, музыковед, директор Института искусств НАН РА Анна Асатрян, деятельность Эдуарда Пашиняна целиком была связана с консерваторией, которой он посвятил около 60 лет своей полной событий жизни.**

***“Обычно, касаясь музыковедения, мы рассматриваем деятельность композиторов или отдельных исполнителей, но не музыковедов, многие из которых остаются в тени. К счастью, в этом году в Союзе композиторов с успехом прошли научные конференции, посвященные Христофору Кушнаряну и Геворгу Геодакяну, а теперь и Эдуарду Пашиняну. Это значит, что жизнь и деятельность музыковедов постепенно привлекает все больший интерес, становясь достоянием не только музыкальных, но и широких кругов”*, – сказала Анна Асатрян.**

**Композитор, заслуженный деятель искусств РА, председатель СКА Арам Сатян был учеником Эдуарда Рубеновича и пронес через всю свою жизнь множество воспоминаний о своем учителе, общении с ним как в официальной, так и в дружеской обстановке. Он рассказал случай, характеризующий Эдуарда Пашиняна как педагога с тонкой интуицией и огромным терпением, способного обнаружить талант и помочь ему проявиться.**

***“У нас на курсе в музыкальном училище им. Романоса Меликяна было порядка 13–14 студентов совершенно разных возрастов с амплитудой до 15 лет. Многие в прямом смысле пришли учиться с улицы, и посадил их на студенческую скамью Эдуард Рубенович. А, например, Манфред Григорян был из числа неблагополучных, но Эдуард Рубенович терпеливо вводил его в искусство музыки, – рассказал Арам Сатян. – Эдуард Пашинян научил нас одновременно писать трехголосый диктант: у него был своя, особая методика, которая давала отличные результаты. Более того, он организовывал своеобразное соревнование между студентами – кто быстрее закончит и сдаст работу. Это подстегивало нас, заставляло сосредоточить внимание и задействовать знания, развивало мышление. В результате весь курс сдавал диктант буквально за 10–15 минут. В этом своем умении мы превзошли даже старшекурсников. В дальнейшем я продуктивно использовал методы Пашиняна в своей педагогической деятельности”.***

**Арам Сатян коснулся и музыковедческих трудов Эдуарда Пашиняна: учебника “Гармония”, изданного в двух частях в 1960 г., который до сих пор остается единственным авторским учебником по этому предмету, написанным на армянском языке, и учебника “Полифония”, вышедшего в свет в 1998 г. усилиями и при личном финансировании архиепископа Шаге Ачемяна. Он обратил внимание на разработанную Эдуардом Пашиняном теорию универсальной суперладовой тональной системы в музыке, созданную на основе ладов, свойственных армянской музыке, систематизировав и развив достижения предшественников. В дальнейшем многие композиторы использовали в своем творчестве эту систему. Научные достижения Эдуарда Рубеновича до сих пор считаются самыми востребованными у теоретиков музыки, педагогов и студентов.**

**“Сегодня здесь, в зале Союза композиторов, собрались люди, *которые не только воспитаны на идеях Пашиняна и руководствуются ими в своей деятельности, но и те, кто высоко ценит его достижения как ученого, теоретика музыки и педагога,* – продолжил Арам Сатян. – *Если человек смог дать своим ученикам такие знания и навыки, значит он большой педагог, если сумел оставить наследие для своего народа, он человек с большой буквы, думающий о национальных ценностях”.***

5



***Цовинар Мовсисян***



***Карине Джагацпанян***



***Арам Сатян***



***Анна Асатрян***

## «Երեւանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստում» գիտաժողովը

*«Քանի դեռ հայ ժողովուրդը կունենայ երգ ու երաժշտութիւն, մենք միշտ կը լսենք Ռոմանոսի սրտի տրոփիւնը, և այնքան կապրի գեղեցիկ հնչիւնների այդ սրտագին վարպետը»:*
**ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ**

Հայ մեծանուն կոմպոզիտոր, մանկավարժ, հայ դասական ռոմանսի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 140-ամյակը և նրա անունը կրող պետական երաժշտական քոլեջի հիմնադրման 100-ամյակն այս տարի, ի թիվս այլ միջոցառումների, նշանավորվեց «Երևանի Ռ. Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստում» աննախադեպ գիտաժողովի անցկացմամբ, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին և 28-ին, կոմպոզիտորի անունը կրող երաժշտական կրթօջախի նույնանուն անվան դահլիճում:

ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ այն կազմակերպվել էր Ռ. Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի համատեղ ջանքերով: Գիտաժողովի բացմանը ներկա էր ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար, քոլեջի շրջանավարտ Դանիել Դանիելյանը: Ողջունելով հյուրերին՝ նա նշեց, որ առանձնահատուկ հուզմունքով է 30 տարի անց ոտք դնում այն հաստատություն, որը նաև իր կայացման գործում մեծ դերակատարում է ունեցել:

*«Ռ. Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջը հազարավոր մարդանց համար եղել է և մնում է այն օրրանը, որից սկիզբ է առնում մեծ և պատասխանատու ճանապարհի սկիզբը:*

*Անգնահատելի է նաև Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի ներդրումը հայ երաժշտարվեստում»,* - նշեց Դանիել Դանիելյանը և վստահություն հայտնեց, որ այս կարևոր կրթօջախի պրոֆեսորադասախոսական կազմը կշարունակի կրթել և դաստիարակել այնպիսի սերունդ, որը երաժշտարվեստի, մշակույթի ոլորտում իր նշանակալի ավանդն ու ներդրումը կբերի մեր երկրին:

Քոլեջի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ Վարազդատ Խաչումյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ աջակցության համար, և գիտաժողովի կազմակերպիչներին՝ Ռ. Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի Երաժշտության տեսության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանին և նույն քոլեջի շրջանավարտ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Աննա Ասատրյանին, որոնց ջանքերով գիտաժողովը կյանքի կոչվեց և մաղթեց ներկաներին ռոմանոսյան շնչով հագեցած գեղեցիկ օրեր:

Պրոֆեսոր Աննա Ասատրյանը հրապարակեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի շնորհավորական ուղերձը, որտեղ մասնավորապես նշված էր. *«Ինձ համար պահը չափազանց հուզիչ է, քանի որ շնորհավորանքի խոսք պիտի ասեմ իմ հարազատ կրթօջախի հոբելյանի առիթով: Իմ սիրելի ուսումնարանի, որտեղ ունեցել եմ իմ առաջին հաջողությունները, ստացել անհրաժեշտ գիտելիքներ և ձևավորվել որպես երաժիշտ ու քաղաքացի: Քոլեջի 100 տարիներից չորսը՝ մի չնչին հատված, ես քայլել եմ նրա հետ (...) 100 տարին առավել քան պատկառելի տարիք է կրթօջախի համար: Եվ այդ ամբողջ ընթացքում Երևանի Ռ.Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը, իսկ վերջին տարիներին պետական երաժշտական քոլեջը, հարատև եղել է իր տեսակի մեջ միակն ու բացառիկը:*

*Այսօր մեր երկրում երաժշտական կրթությունն անհնար է պատկերացնել առանց այս քոլեջի: Առհասարակ՝ հոբելյանական օրերին ամփոփում են ձեռքբերումները: Մաղթում եմ, որ ձեր քոլեջի բոլոր ծննդյան օրերը դառնան ոչ միայն հպարտության առիթ՝ արդեն արվածի համար, այլև նոր հետաքրքիր նախագծերի մեկնարկ:*

*Տոնական այս օրն ուզում եմ մի կողմից խոնարհվել քոլեջի բոլոր նախկին դասատուների առջև, որոնց անձնուրաց ու նվիրական աշխատանքի շնորհիվ մենք՝ նախկին ռոմանոսցիներս, քոլեջում ստացած մեր գիտելիքների, բարոյական ու հոգևոր արժեքների, հայրենասիրական ու հումանիստական դաստիարակության շնորհիվ կարողանում ենք հաղթահարել կյանքի մատուցած բոլոր դժվարություններն ու դիմագրավել մարտահրավերները»:*

Այնուհետև Աննա Ասատրյանը փոխանցեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանի ողջույնի խոսքը:

Գիտաժողովի մեկնարկն ազդարարվեց Ռոմանոս Մելիքյանի «Աշուն» և «Աշնան տողեր» ժողովածուից երկու ռոմանսների դյութիչ հնչյուններով՝ Ծովինար Ամիրյանի (վոկալ) և Արուսյակ Կոստանյանի (դաշնամուր) մեկնաբանությամբ:



Ժաննա Զուրաբյան, Արմեն Բուդաղյան, Աննա Խաչատրյան, Լուսինե Սահակյան, Աննա Ասատրյան, Տաթևիկ Շախկուլյան, Լիանա Հարությունյան, Կարապետ Եղոյան, Նարինե Սահակյան, Արուսյակ Կոստանյան, Նարինե Ավետիսյան

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի նախկին շրջանավարտները, անվանի երաժիշտ-գիտնականներ, ովքեր այժմ իրենց գիտական, մանկավարժական և կատարողական նշանակալի ներդրումն են ունենում հայաստանյան և արտերկրի լավագույն կրթական և մշակութային հաստատություններում:

Ռոմանոս Մելիքյան կոմպոզիտորի և նրա անվան երաժշտական քոլեջի գործունեությանն էին նվիրված գիտական զեկուցումների լայն և բազմաբովանդակ թեմաներ. դրանք ընդգրկում էին մեծանուն կոմպոզիտորի կյանքին, ստեղծագործական, մանկավարժական գործունեությանը, ինչպես նաև քոլեջի երկարամյա պատմությանը նվիրված էջեր:

Գիտաժողովի ընթացքում մի կողմից ներկայացվեց քոլեջի՝ հայ երաժշտարվեստում նշանակալի ավանդ ունեցող շրջանավարտներից մի քանիսի՝ այդ թվում՝ կոմպոզիտորներ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանի, ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կոնստանտին Պետրոսյանի, երաժշտագետներ՝ Աննա Ասատրյանի, արվեստագիտության թեկնածու Զավեն Թագակչյանի և խմբավար, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ներկայիս ռեկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սոնա Հովհաննիսյանի, մյուս կողմից՝ քոլեջի նվիրյալների՝ երկարամյա մանկավարժներ Էդուարդ Փաշինյանի, Բորիս Սակիլարիի, Լուիզա Ջեյթաղյանի, Էռնա Տոնունցևայի, Ռիտա Պետրոսյանի, Մարջան Մխիթարյանի, Իրինա Խաչատրյանի և այլոց ստեղծագործական ու մանկավարժական դիմանկարները:




Հետաքրքրական զեկուցումներով հանդես եկան ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ժաննա Զուրաբյանը, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտը, արվեստագիտության թեկնածուներ և դոցենտներ՝ Լուսինե Սահակյանը, Նարինե Ավետիսյանը, Աննա Խաչատրյանը, Նարինե Սահակյանը, արվեստագիտության թեկնածուներ՝ Մարիաննա Տիգրանյանը, Տաթևիկ Շախկուլյանը, Գայանե Ամիրաղյանը, երաժշտագետ Սաթենիկ Ղափլանյանը և ուրիշներ:

Այս միջոցառումն, իսկապես, խորին հարգանքի տուրք էր 1923 թ. հայ անվանի կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի ջանքերով ստեղծված և այժմ էլ իր անունը կրող քոլեջի հարյուրամյա բեղուն գործունեությանը: Լիահույս ենք, որ գիտաժողովները կկրեն շարունակական բնույթ՝ տարեցտարի իր զեկուցումներում անդրադառնալով իր բոլոր նշանավոր շրջանավարտներին, իսկ երաժշտական այս բազմամյա ավանդույթներ ունեցող երաժշտական կրթօջախը կշարունակի իր անխափան գործունեությունը՝ կրթելով ապագա անվանի և նվիրյալ բազմաթիվ երաժիշտների՝ ի փառս հայ մշակույթի:

**ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ**
*https://azg.am/am/%d5%a5%d6%80%d5%a5%d6%82%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%bc-%d5%b4%d5%a5%d5%ac%d5%ab%d6%84%d5%b5*

## *“ОН УЧИЛ НАС СМОТРЕТЬ ВГЛУБЬ МУЗЫКИ...”*

4

**Продолжая форум, Анна Асатрян отметила, что говоря о чьем–либо педагогическом таланте, необ–ходимо оглянуться на поколение учеников: если они добились успеха и признания, значит педагог был на верном пути. В этом плане Эдуард Рубенович оставил значительный след в отечественной музыке, воспитав не одно поколение грамотных музыковедов, композиторов, ис–полнителей. Она рассказала, как много дала ей методика преподавания Эдуарда Пашиняна, с которой она ознакоми–лась, будучи его студенткой.**

***“В дальнейшем я занялась историей музыки, и знания, приобретенные благодаря Эдуарду Рубеновичу, очень мне помогли,*** **– рассказала Анна Асатрян. *– Он учил нас загляды–вать в глубину музыкального произведения вне зависимости от жанра и формы. Он был скромным человеком, но всегда ценил талант и трудолюбие. Помню, будучи студенткой 3–го курса, я была удостоена стипендии им.Комитаса, что меня очень удивило. Позже я узнала, что на ее соискание меня как лучшую студентку выдвинул сам Пашинян”*.**

**Кандидат искусствоведения, проректор по научной части Ереванской государственной консерватории им. Комитаса Цовинар Мовсисян отметила такую важную черту Пашиняна–педагога, как умение привить любовь к предмету с первых уроков. По ее воспоминаниям, каждый урок в классе Эдуарда Рубеновича был открытием – никаких догм, полная творчес–кая свобода и эксперименты, а обсуждения строились на от–крытых диалогах, обмене мыслями и идеями. Что касается созданных им учебников, они свидетельствуют не только о прекрасном знании научного материала, но и армянской тер–минологии.**

**К научной конференции в режиме онлайн подключился председатель армянской культурной организации “Армянс–кий музыкальный фестиваль” (США, Провиденс), сопредсе–датель иностранного комитета СК Армении Константин Пет–росян. С докладами выступили музыковед, профессор ЕГК им. Комитаса Карине Джагацпанян; музыковед, завкафедрой теории музыки Ереванской консерватории Рузанна Степанян; композитор, профессор ЕГК им. Комитаса Михаил Кокжаев, а также музыковеды, преподаватели гюмрийского филиала ЕГК Рита Агаян, Анаит Гарибян и Нара Багдасарян.**

**Добавим, что в рамках научной конференции в исполне–нии лауреата республиканских и международных конкурсов Марианны Айрапетян прозвучали пьесы из фортепианного цикла Эдуарда Пашиняна “От простого к сложному”.**

**МАГДАЛИНА ЗАТИКЯН**
***https://golosarmenii.am/article/195649/%C2%ABon–uchil–nas–smotret–vglub–muzyki–––%C2%BB?fbclid=IwAR3MGajB_bDXT6UvjW7j6LWl–5i_DpnfWyL8fVHE_4RL4eoSznPxHXyZGuk#***

# Երաժշտական անսյուդարչը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

1 ✔ Հոկտեմբերի 18-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում համերգ-դասախոսությամբ հանդես եկավ դաշնակահարուհի, բուհի դասախոս Մարգարիտա Գրիգորյանը: Ընտրված շատ հետաքրքիր ծևաչափը վերաբերում էր բարոկկոյի դարաշրջանի կոմպոզիտոր Դոմենիկո Սկարլատտիի կլավիրային ստեղծագործություններին, մասնավորապես, սոնատներին: Համերգը բացառիկ էր նրանով, որ կատարվեցին կոմպոզիտորի 15 սոնատները՝ յուրահատուկ մեկնաբանություններով, ինչը կարելի է դիտարկել վարպետության դասի, հետաքրքիր զրույցի, կատարողական արվեստի առանձնահատկությունների ինքնօրինակ դրսևորումների շրջանակում: Անշուշտ, հմուտ կատարողի հետ այսպիսի հանդիպումը ճանաչողական կարևոր արժեք է կրում և ունի հեռանկարների մեծ հնարավորություններ:



ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի համերգին, դիրիժոր Արմեն Կարճյան, մենակատար՝ Արամ Բադալյան (Գերմանիա)

✔ Հոկտեմբերի 19-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ հանդիպում անվանի կոմպոզիտոր, երաժշտագետ, կոմիտասագետ, միջնադարագետ Արթուր Շահնազարյանի հետ: Նա հանդես եկավ բանախոսությամբ, որը նվիրված էր հայ ժողովրդական երաժշտության և կոմպոզիտորական դպրոցի ծագումնաբանության խնդիրներին ու հիմնադրույթներին: Շատ համոզիչ փաստարկներով և տիպական օրինակներով նա հիմնավորեց այն թեզը, որ հայ ժողովրդական երգերի հատկապես տոնածիսական նմուշներում առկա են հայ ազգային մշակույթի հնագույն շերտերը: Դրանց հայտնաբերման և բացահայտման շնորհիվ էր, որ Կոմիտասին հաջողվեց եվրոպական դասական կոմպոզիտորական արվեստի մեթոդաբանությունը դնել նոր հիմքերի վրա և ձևավորել հայ ազգային կոմպոզիտորական դպրոց: Հանդիպումն անցավ մեծ հետաքրքրությամբ, ինչեցին բազմաթիվ հարցեր և բացի սպառիչ պատասխաններից անվանի երաժշտագետը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի գրադարանին նվիրեց հայ միջնադարյան խազային նոտագրության մասին իր հեղինակած հնգիատորյակը և Է ԱՐԱՐ աշխատությունը: Նշենք, որ այս անչափ հետաքրքիր հանդիպումը կայացավ Նարեկացի արվեստի միության ֆինանսական աջակցությամբ, ինչի համար բուհի տնօրինությունը հայտնեց իր խորին երախտագիտությունը:



Արթուր Շահնազարյան

✔ Հոկտեմբերի 20-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում կայացավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի համերգը: Մենակատարն էր անվանի ջութակահար, Դեթմոլդի (Գերմանիա) կոնսերվատորիայի պրոֆեսոր Արամ Բադալյանը (ծնվել է Երևանում, ավարտել է Պ.Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը, կրթությունը շարունակել է Բելգիայի և Գերմանիայի կոնսերվատորիաներում): Նա սիրով համաձայնել էր համագործակցել գյումրեցի երաժիշտների հետ՝ Կամերային երաժշտության ազգային կենտրոնի Հայաստանի նախագծի շրջանակներում անցկացված երևանյան համերգից հետո: Գյումրիում անցկացված ինքնատիպ վարպետության դասերը, որոնք տևեցին շուրջ հինգ օր, նվագախմբի երիտասարդ երաժիշտների համար դարձան կատարյալ արվեստի, ներդաշնակ համանվագի և կատարվող երաժշտական կտավի բացառիկ խորքային ընկալման ու համարժեք մեկնաբանության բազմաթիվ գաղտնիքների բացահայտման եզակի հնարավորություններ: Նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Արմեն Կարճյանի ղեկավարությամբ կատարեց Ֆ.Մենդելսոնի ջութակի և նվագախմբի ռե-մինոր Կոնցերտը, Է. Էլգարի լարայինների Սերենադը, Բ. Բրիտտենի «Հասարակ սիմֆոնիան» և Ա. Պիացոլլայի «Տարվա եղանակները Բուենոս Այրեսում» ստեղծագործությունները: Համերգն անցավ մեծ հաջողությամբ՝ գյումրեցի ունկնդրին պարգևելով ոգեշնչման ու հիացումի անզուգական պահեր:

✔ Հոկտեմբերի 29-ին, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղում անցկացվեց «Ափինյանական ընթերցումներ ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» հանրապետական 3-րդ գիտաժողովը, որի կազմակերպիչներն են՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը և ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղը: Արդեն ավանդական դարձած այս կարևոր գիտական հարթակը հնարավորություն տվեց քննարկելու և արծարծելու հայ ավանդական, և դասական երաժշտության, բանահյուսության մի շարք խնդիրներ: Ներկայացվեցին հետևյալ թեմաներով զեկուցումներ. «Աստրախանի հայ աշուղների գործունեությունը XVI-XIX դարերում» (Հ.Հարությունյան), «Բանահյուսական գրառումներ Ախալքալաքից և Ախալցխայից» (Ն.Եղոյան), «Կերակրի խորհրդաբանությունը մանկախաղաց երգերում. Շիրակի բանահյուսական նյութերի քննությամբ» (Հ.Մատիկյան), «Խ.Ավետիսյանը և հայ քաղաքային ավանդական երաժշտությունը» (Վ.Ադամյան), «Արցախի երաժշտական կյանքի էջերից» (Ռ.Աղայան) և այլն: Գիտաժողովին մասնակցեցին նաև ԵՊԿ ԳՄ ուսանողները, հետևյալ աշխատանքներով՝ «Երվանդ Երկանյանի խմբերգերը՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին» (Ա.Հովհաննիսյան), «Ալինա Փահլևանյան. ֆոլկլորագիտական որոնումների խաչուղիներում» (Ս.Խաչատրյան), «Ստեփան Ռոստոմյանի վոկալ ստեղծագործությունները» (Հ.Խաչատրյան): Գիտաժողովի աշխատանքների շրջանակներում ներկայացվեց 2022թ. անցկացված համանուն գիտաժողովին ներկայացված աշխատանքների հիման վրա կազմված և հրատարակված Գիտական հոդվածների ժողովածուն:



ԵՊԿ ԳՄ ռեկտորատ, գիտաժողովի մասնակիցներ

✔ Նոյեմբերի 12-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում հայ անվանի դուդուկահար, ՀՀ ժողովրդական արտիստ Գևորգ Դաբաղյանի հետ: ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում արդեն ավանդական դարձած ժամանակակից անվանի կոմպոզիտորների և կատարողների հետ հանդիպմանը ֆինանսապես աջակցել էր Նարեկացի արվեստի միությունը, որը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի բացառիկ բարեկամն ու գործընկերն է: Այս հանդիպումը, Գ.Դաբաղյանի մտահղացմամբ, ինքնօրինակ դասախոսություն էր ու վարպետության դաս՝ հաճախ ընդմիջվող փայլուն կատարումներով: Լսարանին ներկայացվեցին հայ դուդուկի կատարողական, տեխնիկական, նվագարանագիտական հանգամանալի մեկնաբանություններ, պատմական, աղբյուրագիտական հարուստ նյութ և, որ ամենակարևորն է, արխիվային բացառիկ ձայնագրություններ՝ Մարգար Մարգարյանի, Գլախո Զաքարյանի, Լևոն Մադոյանի, Վաչե Հովսեփյանի կատարումներով: Հմուտ վարպետությամբ և խորությամբ դուդուկի հնչողությունն ու կատարողականությունը վերստին բացահայտվեց իբրև հայ ինքնության բացառիկ դրսևորում, որն ամբողջ աշխարհում հայ հոգևոր կերտվածքի կրողն է: Հանդիպմանը մասնակցեցին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի հայ ավանդական կատարողական արվեստի բաժնի վարիչ Կարապետ Շաբոյանը՝ իր աշակերտների հետ և կոնցերտմայստեր Մարգարիտա Գրիգորյանը: Հանդիպումն անցավ ջերմ և բովանդակալից մթնոլորտում՝ նոր հանդիպումների ակնկալիքով:



Գևորգ Դաբաղյան

✔ Նոյեմբերի 18-ին, Գյումրիի Կամերային երաժշտության դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին: Հայ աշխարհահռչակ կոմպոզիտորի հոբելյանական համերգաշարերի թվում այս համերգը ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնածն էր և նախատեսում էր երեք համերգ՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կատարողական ուժերով: ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողների և դասախոսների միասնական ելույթներով կայացավ շարքի 2-րդ համերգը, որը վարում էր երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ գիտքարտուղար Օլյա Նուրիջանյանը: Ելույթ ունեցան ուսանողներ Լյուդմիլա Հովսեփյանը, Լիլիթ Ղարիբյանը, Հեղինե Խաչատրյանը, Անահիդա Զաքարյանը, Անի Գրիգորյանը, Արփինե Գրիգորյանը, հանդես եկան բուհի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ Արփինե Մանուկյան) և կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրի-

7



ԵՊԿ ԳՄ կամերային նվագախումբ,
գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Արմեն Կարճյան



ԵՊԿ ԳՄ երգչախումբ,
գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ Արփինե Մանուկյան

# Дорогу молодым (впечатления после концерта)

Каждый концерт, каждый выход на сцену, особенно для молодых участников–исполнителей — это всегда праздник (как бы не тривиально это звучало, но это именно так), который остается в памяти очередной ступенью к совершенствованию своего профессионализма, познанием собственных возможностей и выработкой дальнейших шагов в этом направлении. Концерт камерной инструментальной музыки, состоявшийся 23 октября 2023 года, “Дорогу молодым” (который представлял Ансамбль старинной музыки “Тагаран” и его художественный руководитель и дирижер, засл. деятель иск. РА Седрак Ереканян), составленный из произведений современных армянских композиторов, был несколько необычен потому, что идея его проведения принадлежит выпускнице Ереванской консерватории им.Комитаса, которая ныне работает над кандидатской диссертацией по теме современной армянской камерной инструментальной музыки известных армянских композиторов Гоар Карапетян. Ей – организатору и пианистке – вовсе необязательно было волноваться, выступая на сцене Дома камерной музыки им.Комитаса. Будущий музыковед своей идеей проведения концерта современной армянской камерной музыки вдохновила молодых коллег–исполнителей, которые поддержали ее творческую идею. Отметим, что руководителем диссертации является доктор искусствоведения, известный музыковед, автор множества статей, исследований и книг о музыкальном искусстве и деятелях культуры Армении Маргарита Рухкян.

В концерте прозвучали три произведения известных авторов: Соната для флейты и фортепиано Рубена Саркисяна, Пять багателей Тиграна Мансуряна и Концерт для флейты, кларнета, скрипки, виолончели и фортепиано Ваграма Бабаяна.

Когда–то, в далеких 1980–х, известный музыковед Марина Берко, характеризуя человеческий и творческий облик композитора Рубена Саркисяна (1945–2013), лауреата Гос.премии РА (2007) нашла такое определение, как “интелектуальная одухотворенность”. В своей статье она писала: *“Для него мысль — не отвлеченная категория, она является в то же время категорией эмоциональной. ...Музыку Саркисяна отличает внутренняя свобода и естественность, в ней витает дух романтической поэзии”.* (“На рубеже творческой зрелости”, //Литературная Армения, 1982., N 8). Талантливо написанная одночастная Соната (создана в 2001 году) несет в себе идею трехчастности по свему настроению и тематическому плану и развитию музыкального материала, сочетая яркий современный язык и неоспоримые коды армянских мелодий, мотивов, умело переплавленных в творческом горниле известного композитора. Флейтистка Тамары Арутюнян и пианистка Гоар Карапетян



*Гоар Карапетян*

трепетно и с любовью отнеслись к исполняемой музыке, к каждому ее обороту, мелкому элементу мелоса на основе родных интонаций, охватив ее в целостной интерпретации.

У композитора, народного артиста РА, Тиграна Мансуряна своя творческая лаборатория, свойственная его мировосприятию, его композиторскому мышлению, и Пять багателей ярко продемонстрировали индивидуальный узнаваемый почерк автора. Исполнители–ансамблисты Кристина Читчян (скрипка), Теймур Абиби (виолончель) и Гоар Карапетян (фортепиано) нашли присущую композитору форму трактовки музыкального текста, и вместе с тем особую, свою интонацию передачи собственных творческих импульсов.

Автор последнего произведения – Концерта для флейты, кларнета, скрипки, виолончели и фортепиано — Заслуженный деятель искусств Армении, композитор Ваграм Бабаян присутствовал в зале и тепло приветствовал исполнителей: Тамару Арутюнян (флейта), Давида Арутюняна (кларнет), Кристину Читчян (скрипка), Теймура Абиби (виолончель) и Гоар Карапетян (фортепиано). Концерт Ваграма Бабаяна был написан по заказу из Франции в 1988 году и успешно неоднократно исполнялся различными музыкантами как в Армении, так и в зарубежных странах. В Концерте для оригинального и одновременно очень гармоничного состава были слышны отзвуки известной “Марсельезы”, мастерски использованные автором. Маргарита Рухкян в своей книге “Портреты армянских композиторов” так высказалась о творчестве Ваграма Бабаяна: “Постижение природы и места человека в ней сегодня воспринимается как высшая цель искусства, как та вершина, к которой постоянно идет человек. В своих произведениях Ваграм Бабаян достигает этой высоты; с нее виден мир, в котором мы живем” (Ереван., 2009. С. 106). Отметим, что сам автор счел достойной сегодняшнюю интерпретацию своего опуса. Музыканты отнеслись чутко к малейшим намерениям друг друга в проведении тем, создании определенных звучаний–кластеров в исполнении этого чрезвычайно интересного произведения именитого композитора.

В целом концерт, организованный пианисткой, соискателем Института Искусств Национальной Академии РА Гоар Карапетян, оставил хорошее впечатление, публика тепло приветствовала выступающих. Молодые исполнители–ансамблисты, среди которых были студенты Ереванской консерватории, впервые исполнившие эти сочинения, были настроены на одной эмоциональной волне, все звучало грамотно, академично, профессионально. Быть может хотелось больше яркости красок, выпуклости звуковой палитры, что повысило бы градус эмоциональности на сцене.

Народный артист СССР, композитор, около 36 лет бессменный председатель СК Армении Эдвард Мирзоян писал: *“Думая об особенностях творческого процесса, все больше убеждаюсь в том, что, многое зависит не только от степени одаренности композитора и его индивидуальности, но и от того, насколько раскрепощены и устремлены к единой цели его силы. Жизнь неоднократно доказывала, что увлеченность, заинтервсованность творческой личности способны совершать чудеса”* (Э.Мирзоян., “Фрагменты”.,”Амроц груп” Ереван 2005., С.136–137) Думается, эти слова выдающегося деятеля культуры Армении, мудрого Эдварда Мирзояна можно отнести в полной мере и к музыкантам–исполнителям.

Поздравляем всех участников концерта, и пусть таких идей в организации вечеров армянской современной музыки будет как можно больше. Ведь кто, как не мы должны исполнять и пропагандировать нашу музыкальную культуру, которая в высшей мере достойна, чтобы ею гордились!

Дорогу энтузиастам, дорогу молодым!

**САЕНИК МАГАКЯН**
***Профессор ЕГК***
***23 октября 2023 г.***

# Երաժշտական անսուղարկը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում



*Հասմիկ Հարությունյան, Ծովինար Մովսիսյան, Դավիթ Ղազարյան, Արամ Հովհաննիսյան, համերգի ունկնդիր*



*ԵՊԿ գործիքային կամերային ամբիոնի Լարային քառյակ*



*Դավիթ Ղազարյան, Հասմիկ Հարությունյան*

6

ժոր՝ Արմեն Կարճյան): Հնչեցին կոմպոզիտորի Տոկատը, Պոեմը, Վոկալիզը, ջութակի և նվագախմբի Կոնցերտի 2-րդ մասը, «Գարուն Երևան» խմբերգը, ինչպես նաև Կոմիտասի, Ա. Բաբաջանյանի. Ռ. Ալթունյանի, Կ. Անանյանի ստեղծագործություններից: Ելույթ ունեցավ նաև ԵՊԿ գործիքային կամերային ամբիոնի Լարային քառյակը:

Համերգին ներկա էին ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը, գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, Վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան Ռուբեն Ասատրյանը, պրոֆեսոր Սերգեյ Քէչեկը, Երաժշտության պատմության ամբիոնի դասախոս, դոցենտ Լիլիթ Մարտիրոսյանը, ԵՊԿ ԳՄ դասախոսներ և ուսանողներ: Համերգի սկզբում շնորհավորական ուղերձով հանդես եկավ բուհի տնօրեն Հ. Հարությունյանը՝ «Կոմիտասական» հուշամեդալով պարգևատրելով Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանին՝ Ընկերության հիմնադրման 65-ամյակի առթիվ: *«Ազգանպաստ ու ազգանվեր գործունեության մեծ վերելքների և նորանոր հաջողությունների ակնկալիքներում,* - նշվեց ուղերձում, - *լիահույս ենք, որ Շիրակ աշխարհի երաժշտախմբերի և այս հրաշալի Ընկերության համագործակցությունն ու ստեղծագործական կապերի ամրապնդումը բերելու է նորանոր հեռանկարներ»:* Դ.Ղազարյանը Ընկերության «Թ. Ալթունյան» հուշամեդալը հանձնեց ԵՊԿ ԳՄ տնօրեն Հ. Հարությունյանին, իսկ բուհի գրադարանին նվիրեց Ա. Բաբաջանյանի և հայ կոմպոզիտորների երգերի և ռոմանսների նորատիպ ժողովածուներ:

Համերգն անցավ մեծ ոգեշնչումով և խաչատրյանական ստեղծագործությունների հոգեբուխ մթնոլորտում:

***Պատրաստեց՝* ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**
***Նյութը վերցված է***
*https://www.facebook.com/gyumriconservatory **էջից***

## ПАМЯТИ УШЕДШИХ



*Юрий Темирканов*

2 ноября 2023 ушел из жизни дирижер, общественный деятель, художественный руководитель Петербургской филармонии Юрий Хатуевич Темирканов. До своего 85–летия дирижер не дожил немногим больше месяца. Церемония прощания состоится 5 ноября в Большом зале Петербургской филармонии. Начало в 11.00.

Евгений Петровский, заместитель художественного руководителя Санкт–Петербургской академической филармонии имени Д.Д. Шостаковича:

*"Сегодня пришла очень тяжелая для нас новость – для нас, для филармонии, но и для культуры в целом – российской культуры, мировой культуры. Сегодня на 85–м году жизни скончался выдающийся музыкант, выдающийся дирижер, маэстро Юрий Хатуевич Темирканов, художественный руководитель Санкт–Петербургской академической филармонии имени Дмитрия Дмитриевича Шостаковича.*

*Маэстро возглавлял филармонию как художественный руководитель с 2001 года, но большая часть его творческой жизни была связана с этим музыкальным домом, которому он неоднократно признавался в любви. Он дебютировал здесь в 1967 году с Заслуженным коллективом Республики симфоническим оркестром Ленинградской филармонии (ныне – Заслуженный коллектив России), который впоследствии возглавлял, начиная с 1988 года. Он работал здесь как главный дирижер Симфонического оркестра Ленинградской филармонии (ныне это – Академический симфонический оркестр Петербургской филармонии) – с 1968 по 1976 год.*

*В 1988 году после смерти Евгения Александровича Мравинского Юрий Хатуевич Темирканов перешел в Ленинградскую филармонию из Кировского театра и возглавил Заслуженный коллектив России академический симфонический оркестр Петербургской филармонии, который начиная с этого времени во всем мире знали как оркестр Темирканова.*

*Безусловно филармония сегодня осиротела, потому что Юрий Хатуевич – не просто первое лицо филармонии, он – символ филармонии. Трудно сказать, как мы будем жить дальше.*

*Безусловно, наши концертные планы на этот сезон претерпят драматические изменения. Как вы знаете, этот сезон планировался как сезон к юбилею маэстро Темирканова: 10 декабря он должен был отметить 85–летие. Этой дате посвящен сезон, юбилею должен быть посвящен и XXIII Международный зимний фестиваль "Площадь Искусств", который будет, как понятно теперь, посвящен памяти маэстро.*

*Для филармонии закончилась большая эпоха, эпоха Темирканова. И это, конечно, очень драматическое известие и событие для всей мировой культуры.*

*Панихида по маэстро Темирканову пройдет в Большом зале филармонии 5 ноября, она начнется в 11 часов. Участие в церемонии примут оба оркестра филармонии, которые возглавлял Юрий Хатуевич: Заслуженный коллектив России и Академический симфонический оркестр. Дирижировать Заслуженным коллективом России будет его главный дирижер Николай Алексеев, Академическим симфоническим оркестром – дирижер коллектива Владимир Альтшулер».*

Юрий Темирканов родился 10 декабря 1938 года в Нальчике. С 1953 по 1957 год учился в Средней специальной музыкальной школе при Ленинградской консерватории им. Н.А. Римского–Корсакова по классам скрипки и альта. В 1962 окончил Ленинградскую консерваторию по классу альта, в 1968 — по классу оперно–симфонического дирижирования у профессора И.А. Мусина.

В 1965 дебютировал в Ленинградском Малом театре оперы и балета (ныне Михайловский театр) в опере Дж. Верди "Травиата", руководил спектаклями в Оперной студии при консерватории. В 1966 удостоен первой премии на II Всесоюзном конкурсе дирижеров в Москве.

В 1967 году дебютировал с Симфоническим оркестром Ленинградской филармонии. По инициативе Е.А. Мравинского стал дирижером–ассистентом коллектива.

С 1976 по 1988 годы художественный руководитель и главный дирижер Ленинградского театра оперы и балета им. С.М. Кирова (ныне Мариинский театр).

В 1988 после смерти Е. А. Мравинского был избран художественным руководителем и главным дирижером Заслуженного коллектива России Академического симфонического оркестра Ленинградской филармонии имени Д.Д. Шостаковича. Покинув пост главного дирижера оркестра в январе 2022, остался художественным руководителем коллектива.

С 2000 до конца жизни занимал пост художественного руководителя Санкт–Петербургской филармонии.

С 1979 – главный приглашенный дирижер Филадельфийского (США) и Лондонского Королевского филармонического оркестра, а с 1992 по 1998 – главный дирижер Королевского оркестра.

С 1988 – главный приглашенный дирижер Симфонического оркестра Датского радио (Копенгаген).

С 1992 по 1997— главный приглашенный дирижер Дрезденского филармонического оркестра.

С января 2000 по 2006 — главный дирижер и художественный руководитель Балтиморского симфонического оркестра (США).

С 2007 по 2009 — главный приглашенный дирижер Большого театра.

В 2010–2012 — музыкальный директор Королевского театра Пармы (Италия).



*Юрий Темирканов. Архив Санкт–Петербургской филармонии им. Д. Д. Шостаковича, личный фонд Юрия Темирканова.*

В 2015 стал почетным пожизненным дирижером Национальной академии Санта–Чечилия (Рим).

В 1979—1988 годах преподавал в Ленинградской консерватории (с 1986 профессор).

Юрий Темирканов — полный кавалер ордена "За заслуги перед Отечеством". Народный артист СССР (1981). Лауреат Государственной премии СССР (1976, 1985). Лауреат Государственной премии РФ (1998 — за концертные программы 1995–1998; 2017 — за выдающиеся достижения в области гуманитарной деятельности). Удостоен многих других наград СССР и России, орденов Болгарии, Италии, Японии.

*"Музыкальное обозрение" 2023*

***

**Памяти Тиграна Алиханова**

29 октября 2023 в Москве на 81–м году жизни скончался пианист, педагог, профессор, бывший ректор Московской консерватории Тигран Алиханов. 2 ноября в 11.00 в фойе Большого зала консерватории состоялась гражданская панихида.

*"Это большая печаль, особенно для меня, потому что мы с ним были в прекрасных отношениях. Он замечательный музыкант. У нас было взаимное уважение, мы вместе ездили в поездки с "Новыми именами" лет 15 назад. Многие из моих учеников у него учились по классу камерного ансамбля. Это большая потеря»*, – сказал пианист, профессор МГК Александр Мндоянц.

Тигран Алиханов родился 22 января 1943 в Москве в семье крупнейшего ученого, академика Абрама Алиханова, занимавшегося физикой атомного ядра и космических лучей, создателя и первого директора Института теоретической и экспериментальной физики (ИТЭФ имени А.И. Алиханова). Мать Тиграна Алиханова – Слава Рошаль – скрипачка, лауреат Всесоюзного конкурса музыкантов–исполнителей, солистка Московской филармонии.

В 1961 Т. Алиханов окончил фортепианное отделение ЦМШ (класс А.С. Сумбатян), в 1966 – Московскую консерваторию (класс Л.Н.Оборина), в 1969 – ассистентуру–стажировку. В 1967 стал лауреатом Международного конкурса им. М. Лонг и Ж. Тибо в Париже (1967). Выступал с сольными концертами, в ансамблях и с симфоническими оркестрами в России и многих странах мира. Играл с оркестрами под управлением Геннадия Рождественского, Владимира Ашкенази, Мариса Янсонса, Валерия Полянского и других; в ансамблях с пианистами Алексеем Любимовым, Николаем Петровым, скрипачами Виктором Пикайзеном, Анастасией Чеботаревой, виолончелистами Иваном Монигетти, Александром Рудиным, Валентином Фейгиным, Владимиром Тонха, Михаилом Хомицером, Ваграмом Сараджяном, органисткой Людмилой Голуб (супруга Т.А. Алиханова), ансамблем солистов ГАБТа под управлением А. Лазарева, Московским хором молодежи и студентов Б. Тевлина, Московским струнным квартетом, квартетами им. Шостаковича, Прокофьева, Глинки.

В репертуаре пианиста была музыка разных эпох. Среди крупнейших его достижений – неоднократно исполненный цикл "32 сонаты Бетховена", другие монографические программы. Будучи превосходным интерпретатором фортепианной классики XVIII–XX веков – Баха, Моцарта, Бетховена, Шуберта, Шопена, Листа, Шумана, Брамса, Дебюсси, – он уделял большое внимание музыке XX века: Айвза, Бартока, нововенцев, Мессиана, Рославца, Онеггера, Хиндемита, Стравинского, Прокофьева, Шостаковича, Хачатуряна… Значительное место в фортепианном и камерном репертуаре Алиханова занимала музыка современников (П. Булез, Дж. Кейдж, Дж. Крам, Э. Денисов, А. Шнитке, Ю. Буцко, Г. Фрид, Б. Чайковский, А. Кнайфель, Д. Куртаг). Он исполнил российские премьеры Третьей фортепианной сонаты Булеза, "Знаков на белом" и Фортепианного квинтета Денисова, Скрипичной сонаты и Фортепианного трио Буцко, Фортепианного квинтета Фрида и многих других сочинений. Пианист принимал участие в форумах современной музыки в нашей стране и за рубежом: "Московская осень", "Альтернатива" (Москва), фестивали в Харькове, Таллине, Софии, Торенто (Италия); фестивали, посвященные музыке Шостаковича в Москве (1986, 1996) и во Франции. Лауреат премии венгерского Агентства по авторским правам ("Artisjus") за пропаганду произведений венгерских композиторов (1985).

Более полувека Тигран Алиханов отдал преподаванию. В 1966–1973 он был ассистентом кафедры музыкальных инструментов МГПИ им. В.И. Ленина. С 1971 преподавал в Московской консерватории на кафедре камерного ансамбля и квартета. С 1989 – доцент, с 1992 – профессор консерватории. В 1992–2023 – заведующий кафедрой камерного ансамбля и квартета. С 1992 также работал в Музыкальном училище (колледже) при Московской консерватории.

Среди учеников Тиграна Алиханова – Александр Князев, Павел Нерсесьян, Рувим Островский, Алексей Шалашов, Юрий Мартынов, Ксения Башмет.

Тигран Алиханов работал в жюри Всероссийского музыкального конкурса (2015), Всероссийского конкурса камерных ансамблей имени С.И. Танеева в Калуге (1996), Всероссийского конкурса им. В.И. Сафонова в Казани (1997), Международного конкурса пианистов в Цинцинатти (США) и др.

В 2005–2009 Тигран Алиханов был ректором МГК. В эти годы в консерватории организованы и проведены Первый внутривузовский конкурс камерных ансамблей и струнных квартетов им. Н.Г. Рубинштейна (2006), Первый открытый конкурс камерных ансамблей и струнных квартетов им. Н.Г. Рубинштейна (2007), IV Международный конкурс молодых композиторов имени П.И. Юргенсона (2007), Конкурс музыковедческих работ "Alma mater" (2006), I и II Всероссийские конкурсы по теории и истории музыки и композиции для учащихся средних специальных учебных заведений (2007, 2008), I Международный конкурс органистов имени А.Ф. Гедике (2008) и другие конкурсы.



*Тигран Алиханов*

В годы ректорства Т.А. Алиханова в консерватории состоялись фестивали к 150–летию С.И. Танеева, к 250–летию В.А. Моцарта, к 125–летию Н.Я. Мясковского, к 100–летию Д.Д. Шостаковича, к 125–летию И.Ф. Стравинского, к 100–летию Д.Ф. Ойстраха, к 100–летию О. Мессиана.

Выдающимся событием московской музыкальной жизни тех лет стал концерт "Три коллективных сочинения", организованный "Музыкальным обозрением" и прошедший 5 декабря 2006 года в Московском международном Доме музыки. Помимо двух сочинений, написанных по заказу "МО" ("Десять взглядов на десять заповедей" и "Посвящение". К 100–летию Д.Д. Шостаковича), в нем прозвучали "Вариации на тему Мясковского", написанные 11 композиторами – профессорами и преподавателями Московской консерватории в 1966 к 100–летию консерватории. Этот опус прозвучал единственный раз на юбилейном концерте в Большом зале консерватории 15 октября 1966 под управлением Г.Н. Рождественского, после чего партитура бесследно исчезла. Но, как выяснилось, сохранились партии, по которым партитура сочинения была восстановлена благодаря усилиям проректора Е.Г. Сорокиной и директора библиотеки МГК Э.Б. Рассиной. Большую роль в этом процессе сыграл и ректор Т.А. Алиханов. Он прислал приветствие организаторам концерта, в котором, в частности, отметил:

*"С газетой "Музыкальное обозрение" Московскую консерваторию связывают давние дружеские и партнерские отношения. <…> Наглядный пример нашего плодотворного сотрудничества – концерт в Доме музыки, результат коллективных усилий "Музыкального обозрения" и Московской консерватории. Особенно важно подчеркнуть то, что этот концерт состоялся именно в 2006, объединившем в своей "магии чисел" сразу несколько крупных юбилеев, каждый из которых – яркая страница истории Московской консерватории. Это и 140–летие самой консерватории, и юбилеи двух великих русских композиторов XX века – 125–летие Н. Я. Мясковского, основателя советской композиторской школы, воспитавшего в Московской консерватории целое поколение замечательных композиторов, и 100–летие Д. Д. Шостаковича, по приглашению В. Я. Шебалина в течение пяти лет (1943–48) работавшего в консерватории.*

*Программа концерта выстроена таким образом, что все три произведения, написанные в разные годы, в разные эпохи, демонстрируют яркую панораму композиторской школы Московской консерватории II–й половины XX – начала XXI века, а имя каждого из 27 (!) его участников являет собой образец преемственности поколений внутри школы и ее традиций, ведущих свое начало с момента основания Московской консерватории. <…>*

*Хочется надеяться на то, что такие замечательные творческие проекты будут иметь свое яркое продолжение».*

Заслуженный артист РСФСР (1990). Народный артист России (2002).

*"Музыкальное обозрение" 2023*

# 30 տարի բեմում.
## *«Փարոս» կամերային երգչախմբի հոբելյանական համերգը*

1

Նոյեմբերի 5-ին, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ միջազգային մրցույթների դափնեկիր «Փարոս» կամերային երգչախմբի հոբելյանական համերգը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ռաֆֆի Միքայէլեան, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան: Երեսուն տարիների ընթացքում երգչախումբը լավագույնս հանդես է եկել Հայաստանի և արտերկրի մեծ բեմերում (Լիբանան, Վրաստան, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Վատիկան, Ֆրանսիա, Ավստրիա, Սլովակիա, Լատվիա, Ռուսաստան), ներկայացնելով հայ և այլազգի երաժշտությունը:


Ռաֆֆի Միքայէլեան


Վաչագան Նավասարդյան


Արմեն Ալավերդյան, «Փարոս» կամերային երգչախումբ


Տեր Վահան քահանա Առաքելյան

*«Մեր ստեղծագործական նվաճումներն անհնար կլինեին առանց աջակիցների: Դրա վառ ապացույցն է 2011թ. Բրատիսլավայում կայացած «Musica Sacra» միջազգային մրցույթում «Փարոս»-ի հաղթանակը, որն արձանագրվեց, երբ երգչախմբի գլխավոր գործընկերոջ դերն ստանձնեց Վիվա-ՄՏՍ–ը: Այդ հաջողությանը հաջորդեցին Երգչախմբերի համաշխարհային խաղերին «Փարոս»-ի նվաճած արծաթե 4 մեդալները (2014 և 2016 թթ.) և հետագա բազմաթիվ պատասխանատու ելույթներն ու հյուրախաղերը»,* – ասել է «Ունիսոն» ՀԿ-ի և «Փարոս» կամերային երգչախմբի տնօրեն Արմեն Ալավերդյանը:

Իր տեսակի մեջ եզակի երգչախումբը ներառական է. երգիչների մեծ մասն ունի հաշմանդամություն: Այն ստեղծվել է 1993 թ., Կարմիր Խաչի հետվնասվածքային վերականգնողական կենտրոնին կից: 2002-ից «Փարոսը» գործում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Ունիսոն» ՀԿ-ին կից: 2011 թվականից «Փարոս» կամերային երգչախմբի Գլխավոր գործընկերն է Վիվա-ՄՏՍ-ը: Երգչախմբին մշտական աջակցություն են ցուցաբերում «Փարոս» հիմնադրամը, Քուլհանջյան - Շտրաուխ ընտանիքը (ԱՄՆ) և Հայկական Կարմիր Խաչի «Գրացիա» միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոնը:


Արցախի «Մռակած» պետական կամերային երգչախումբ, դիրիժոր՝ Կարինե Այդինյան, մենակատարներ՝ Գոհար Ալեքսանյան, Կարինե Աղաջանյան

Համերգի ընթացքում երգչախումբը կատարեց Հ. Օդաբաշյանի «Հայաստան» (նվագակցեց Լիլիթ Թալանչյանը), Դ. Դեյվիսնի *«Rytmo»* (նվագակցեցին՝ Լիլիթ Թալանչյանը և Ռասմիլա Ալավերդյանը) և Գ. Օրբանի *«Deamon»* ստեղծագործությունները, դիրիժոր Ռաֆֆի Միքայէլեան: Երգչախմբի հիմնադիր, նախկին խմբավարի՝ Վաչագան Նավասարդյանի ղեկավարությամբ «Փարոս»-ը կատարեց Բ. Կանաչյանի «Բամ Փորոտան»-ը, մենակատար՝ Հարություն Խաչատրյան, նվագակցող՝ Ռասմիլա Ալավերդյան:


Սիմոն Սարգսյան

Շնորհավորական հրաշալի ելույթներով հանդես եկան «Գեղարդ» երգեցիկ խումբը (խմբավար Անահիտ Պապայան), որը կատարեց Հ. Կլայեցու (XII դ.) «Այսօր ցնծան», (մշակումը՝ Ե. Երկանյանի), Ս. Մովսես Խորենացու (V դ.), «Ջանճառելի լուսոյ մայր» (մշակումը՝ Կոմիտասի, (ըստ Վարդան Սարգսյանի հրատարակության))՝ ստեղծագործությունները, և Երևանի Արմեն Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան, նվագակցող՝ Ռուզաննա Վարոսյան), որը կատարեց Վ. Ջոնսոնի *«Plaudite»* և Կ. Պետրոսյանի «Հայաստան» ստեղծագործությունները: Ռ. Աբրահամյանի «Ջոն Արցախի» ստեղծագործության գեղեցիկ և անչափ հուզիչ կատարմամբ հանդես եկավ Արցախի «Մռակած» պետական կամերային երգչախումբը, հիմնադիր և ղեկավար՝ ԱՀ արվեստի վաստակավոր գործիչ՝ Մարինե Մեսրոպյան, դիրիժոր՝ Կարինե Այդինյան, մենակատարներ՝ Գոհար Ալեքսանյան, Կարինե Աղաջանյան, շեփորահար՝ Հարություն Հարությունյան, նվագակցող՝ ԱՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր՝ Սիմոն Սարգսյան: Այն արժանացավ բուռն և հոտկայս ծափահարությունների:


«Արևային զանգակներ» անսամբլ, դիրիժոր՝ Մանուշ Հարությունյան

Ունկնդրի կողմից առանձնակի ջերմությամբ ընդունվեց «Արև-երեխաներ» ՀԿ-ի «Արևային զանգակներ» անսամբլի ելույթը, որը կատարեց Կոմիտասի «Կաքավիկ» և «Շողեր ջան» («Փարոս»-ի հետ համատեղ) երկերը:

Հոբելյանական համերգի ավարտին Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու սպասավոր Տեր Վահան քահանա Առաքելյանը «Փարոս» երգչախմբին փոխանցեց ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությունն ու շնորհավորանքը. *«Հրաշալի ու փառահեղ մի ճանապարհ եք անցել, որի ընթացքում բազմաթիվ դժվարություններ, արժանապատվորեն և սիրով կրելով, հաղթահարել եք՝ բոլորիս և ամբողջ աշխարհին ցույց տալով, որ կարող եք: Փառք Տիրոջը, որ ունենք այսպիսի հրաշալի մի երգչախումբ, որ իր կատարումներով կարողանում է մարդկանց սրտերը հուզել: «Արև-երեխաներ» ՀԿ-ի «Արևային զանգակներ»-ի և ընդհանրապես Դաունի համախտանիշ ունեցող երեխաների գործունեության կարգախոսն է՝ մենք կարող ենք: Այդ կարգախոսն իրապես ուժ է տալիս նրանց՝ առաջ շարժվելու և նորանոր ձեռքբերումներ ունենալու: Ձեր անցած ճանապարհով դուք ևս փաստում եք, որ կարող եք, ինչը մեծ ուրախություն է բոլորիս համար: Թող Աստված օրհնի և առաջնորդի ձեզ և ձեր մտքում այն կարևոր մտածումն ունենաք, որ աստվածային սերը միշտ ձեզ հետ է, որ Աստված պահպանում ու սիրում է ձեզ»:*

Շնորհավորական ուղերձ էր հղել նաև Հայկական Կարմիր Խաչի ընկերության նախագահ Մխիթար Մնացականյանը: Համերգի ավարտին հնչեց Կ. Ափրիկյանի «Սասունցի Դավթի ծնունդը» օրատորիայի ֆինալը, դիրիժոր Ռաֆֆի Միքայէլեան: Այն «Փարոս» կամերային երգչախմբի հետ համատեղ կատարեցին Արցախի պետական երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ ԱՀ արվեստի վաստակավոր գործիչ՝ Նինա Գրիգորյան, Երևանի Արմեն Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբը, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը, գլխավոր դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր արտիստ, Կարեն Դուրգարյան, մենակատարներ՝ Լուիզա Երեմյան, Անի Սիմոնյան, Հարություն Խաչատրյան: Կատարումն ընդունվեց մեծ ոգևորությամբ, և որպես բիս «Փարոս»-ը կատարեց Ա. Շնիտկեի «***Господи, Иисусе***» երկը, դիրիժոր Ռ. Միքայէլեան:

«Փարոս»-ի հոբելյանական համերգի, որը վարեցին Տաթև Ախայանը և Գագիկ Հարությունյանը, կայացմանն աջակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Այն կազմակերպվել էր Արցախից բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող մեր հայրենակիցներին աջակցելու համար:

«Փարոս» կամերային երգչախմբի հիմնադրման 30-ամյակին նվիրված համերգը ևս մեկ անգամ փաստեց, որ իր տեսակի մեջ եզակի երգչախումբն ու նման այլ կոլեկտիվներ, իրենց ջանքերի, համառ աշխատանքի և ուժեղ կամքի առկայության շնորհիվ կարող են հաղթահարել կյանքի բազմաթիվ խոչընդոտներ և շարժվել առաջ:

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
***Երաժշտագետ,***
***«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր***


Երևանի Արմեն Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբ, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան


«Գեղարդ» երգեցիկ խումբ, խմբավար Անահիտ Պապայան

# Փառահեղ համերգ Պրահայում՝ արցախահայության օգնության համար

Նոյեմբերի 16-ին, Պրահայի Սուրբ Հոգի եկեղեցում արցախահայության օգնությանը նվիրված համերգային ծրագրով հանդես եկան Կարլի համալսարանի երգչախումբն ու Տնտեսական բարձրագույն համալսարանի նվագախումբը՝ մաեստրո Հայկ Ութիջյանի ղեկավարությամբ:

Համերգային ծրագրի սկզբում ներկաներին դիմեց Չեխիայի Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը: Հայր սուրբն անդրադարձավ համերգի նպատակին՝ նշելով, որ աշխարհում այսօր միայն Ուկրաինայում և Իսրայելում չի կատարվում մարդկային աղետ, այլև Արցախում (Լեռնային Ղարաբաղում), որը հայաթափվել է և ամբողջ բնակչությունը (120000 արցախցի, ըստ պաշտոնական հայտարարված տվյալի)՝ 105 հազարից ավելի մարդ տեղափոխվել է Հայաստան: Հայր Սուրբը նշեց, որ Ադրբեջանն աշխարհի առաջ վայրագություններ է կազմակերպում, անխնա սպանելով ոչ միայն խաղաղ բնակիչներին, այլև ոչնչացնելով հայկական մշակութային ժառանգությունը, իսկ աշխարհը լռում է: Այս համերգը մի փոքր ներդրում է լինելու այդ մարդկանց ցավերը մեղմելու հարցում: Վերջում Հայր Բարսեղը շնորհակալություն հայտնեց նաև երգչախմբի և նվագախմբի անդամներին՝ դիրիժոր Հայկ Ութիջյանի ղեկավարությամբ, որ կարողացան իրականություն դարձնել այս նախաձեռնությունը:



Կարլի համալսարանի երգչախմբի և Տնտեսական բարձրագույն համալսարանի նվագախմբի ելույթը՝ դիրիժոր Հայկ Ութիջյանի ղեկավարությամբ

Այնուհետև Սուրբ Հոգու եկեղեցում իր գործի հմուտ նվիրյալ, դիրիժոր Հայկ Ութիջյանի ղեկավարությամբ հնչեցին Կոմիտասի, Վիլեմ Թաուսքի, Հայդենի Թիվ 92 Համանվագի և *Te Deum*-ի փառահեղ կատարումները՝ Կարլի համալսարանի երգչախմբի և Պրահայի տնտեսական բարձրագույն համալսարանի նվագախմբի կատարմամբ: Հրաշալի կատարումները խանդավառության ալիք բարձրացրեցին լեփ-լեցուն եկեղեցու սրահում և յուրաքանչյուր կատարում ընդունվեց բուռն ծափահարություններով: Վերջում հանգանակվեց նաև արցախահայության համար որոշակի գումար, եղան նվիրատվության այլ խոստումներ:

Ինչպես հայտնի է, Արցախի սեպտեմբերյան պարպումից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր աշխարհասփյուռ թեմերով ապահովում է հայաստանյան տարբեր մարզերում ապաստանած բռնի տեղահանվածների օրական կարիքները:

*Նյութը քաղված է https://orer.eu/hy/2023/11/17/%d6%83%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b0%d5%a5%d5%b2-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a5%d6%80%d5%a3%d5%9d-%d5%a1 կայքից,*
*Պատրաստեց*՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆԸ

## «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

✔ Հոկտեմբերի 27-ին, Կապանի Արվեստի պետական քոլեջի համերգասրահում ԵՊԿ ուսանողների կատարմամբ հնչեց XX դարի դասականի և 2023 թ. գլխավոր հոբելյարի՝ Արամ Խաչատրյանի երաժշտությունը: Ելույթը «Արամ Խաչատրյան 120» նախագծով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, ԵՊԿ-ի իրականացրած մարզային առաջին համերգն էր: ԵՊԿ պատվիրակությունը ղեկավարում էր պրոֆեսոր, դաշնակահար, վաստակաշատ մանկավարժ ու երաժշտական դաստիարակության ասպարեզում երկարամյա գործիչ, Սյունյաց աշխարհի հետ մշակութային կապերը կես դարից ավելի կենդանի պահող նվիրյալ՝ Սերգեյ Քեչեկը: Մասնակից երաժիշտների հետ մեկնել էին նախագծի ներկայացուցիչներ՝ ԵՊԿ Գիտական քարտուղար՝ Օլյա Նուրիջանյանը և Արտերկրի քաղաքացի ուսանողների ուսումնական հարցերով պատասխանատու՝ Լիլիթ Մարտիրոսյանը: Արամ Խաչատրյանի կամերային ստեղծագործությունները հնչեցին դաշնակահարներ՝ Արմեն Պուչինյանի, Նարե Սուքիասյանի, Հասմիկ Ալեքսանյանի, Թերեզա Մարկոսյանի, ջութակահար Արնիկ Վարդանյանի (նվագակցող Մարիաննա Հայրապետյան) կատարմամբ, փոխադրումները՝ դաշնակահար Լիլիթ Մարտիրոսյանի, ջութակահար՝ Մերի Մարգարյանի, թավջութակահար՝ Էլեն Պողոսյանի մասնակցությամբ տրիոյով, կլառնետահար՝ Ռստամ Մանուկյանի (նվագակցող՝ Միլենա Հովհաննիսյան), քանոնահար՝ Գոհար Մովսիսյանի և ազգային երգեցողության ամբիոնը ներկայացնող՝ Միքայել Գրիգորյանի մեկնաբանմամբ: Համերգին կոմպոզիցիայի ամբիոնը ներկայացրեց Կարեն Սարջանյանը, ում «Նվիրում Արամ Խաչատրյանին» ստեղծագործության պրեմիերան հնչեց հեղինակի և թավջութակահար Հենրի Երկանյանի մեկնաբանմամբ: Ծրագրի «բիս» - անակնկալը՝ Արմեն Պուչինյանի և Լիլիթ Մարտիրոսյանի զուգանվագն էր՝ «Գայանե» բալետից «Լեզգինկա»-ի կատարմամբ:



Օլյա Նուրիջանյանը, Սերգեյ Քեչեկը, Շուշան Մարտիրոսյանը, Լիլիթ Մարտիրոսյանը և Լիաննա Հակոբյանը համերգի մասնակիցների հետ

Համերգին ներկա էին Կապանի Արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Շուշան Մարտիրոսյանը և նույն քոլեջի նախկին տնօրեն, Կապանի պատվավոր քաղաքացի Լիաննա Հակոբյանը: Հյուրընկալ արվեստագետը հաջորդ առավոտ հանդիպեց ուսանողներին և հետհամերգային տպավորությունն արտահայտեց Գարեգին Նժդեհի խոսքերով՝ Խուստուփ նայող ու նրա անունը կրող հրապարակում. *«Լսել, տեսել, նայել եմ ձեզ ու հիացել... ուրեմն՝ հրաշալի է մեր ապագան: Ուզում եմ, իմանաք, որ կոնսերվատորիան մեր մշակույթի Խուստուփն է: Միշտ բարձր պահեք ձեր բուհ-ի պատիվը ու Կապան համեցեք ձեր մենահամերգներով, տարբեր ծրագրերով: Մենք սիրում ենք մեր հյուրերին: Կապանի Արվեստի պետական քոլեջի դռները միշտ բաց են»:* Ուսանողները կանգառ ունեցան նաև Տաթևի վանքում, հետդարձի ճանապարհին անցավ Կոմիտասի ու Հայրենիքին ձոնված անուշ երգերի կատարմամբ:

✔ Հոկտեմբերի 24-ին կայացավ պրոֆ. Կարինե Օհանյանի ղեկավարած Մասնագիտական դաշնամուրի ամբիոնի համերգը՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին: Ա.Խաչատրյանի ստեղծագործությունը հայ դաշնամուրային արվեստում բացում է նոր ու փայլուն էջ: Այս գործերը ուսումնական նվագացանկի ու համերգային երկացանկի պարտադիր մասն են կազմում: Արամ Խաչատրյանի ժառանգությունը միշտ հետաքրքրել է մանկավարժներին ու կատարողներին՝ ստեղծագործական ձեռագրի նորությամբ ու անկրկնելիությամբ: Այստեղ են առաջին անգամ միավորվել ազգային ավանդույթներն ու պրոֆեսիոնալ դասական արվեստը: Ներածական խոսքով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Ավետիսյանը:



Թերեզա Մարկոսյան, Հասմիկ Ալեքսանյան

✔ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնին կից գործող Միջառարկայական մասնագիտացման կենտրոնում (ղեկավար՝ դոցենտ Լիլիթ Եփրեմյան) այսուհետ կգործի երաժշտաթերապիայի և կրթական ծրագրերի կատարողական պրակտիկայի նախագիծ:

Ստորագրվել է համագործակցության պայմանագիր ԵՊԿ-ի և ԴՈ-ՌԵ-Միթ ՀԿ-ի / *Do Re Meet* (ղեկավար՝ Թագուհի Օնանյան) միջև: Կկազմակերպվեն ուսանողների ելույթները սոցիալապես խոցելի խմբերում՝ մանկատներում, հիվանդանոցներում, ծերանոցներում, փախստականների տեղակայման վայրերում, ինչպես նաև դպրոցներում՝ կրթական հատուկ ծրագրերով: Ելույթները կխրախուսվեն ուսանողական թոշակով: Այս պահին ծրագրում ներգրավված են ԵՊԿ չորս ուսանող, ինչպես նաև շրջանավարտ մասնակիցներ: Ծրագրի հովանավորն է *Live Music Now* միջազգային կազմակերպությունը:



Էլեն Ադամյան

Համագործակցության մասնակիցներն են՝ Էլեն Ադամյանը, դաշնամուր, Էլեոնորա Հարությունյանը, ակադեմիական երգեցողություն, Անի Բալյանը, ջութակ, Տաթև Մինասյանը, դաշնամուր, Լուսյա Կարապետյանը, ակադեմիական երգեցողություն, Ելենա Թորոսյանը, քանոն:

✔ Նոյեմբերի 17-ին, Երևանի *Loft* ինքնազարգացման կենտրոնում կայացավ ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնին կից Միջառարկայական մասնագիտացման կենտրոնում իրականացվող երաժշտաթերապիայի նախագծի հերթական համերգը՝ ԵՊԿ ուսանողներ 4-րդ կուրսի ջութակահար Ժան-Միշել Արոյանի (պրոֆ. Բագրատ Վարդանյանի դասարան) և 3-րդ կուրսի դաշնակահար Թերեզա Մարկոսյանի (պրոֆ. Սերգեյ Քեչեկի դասարան) մասնակցությամբ: Ծրագիրն իրականացվում է *Do-Re-Meet Do Re Meet* կրթամշակութային ՀԿ-ի հետ համատեղ: «Հիշողության սրճարան» ակումբի այցելուները մեծ ոգևորությամբ ընդունեցին երիտասարդ երաժիշտներին: Նրանց հետ էին նաև պրոֆեսիոնալ երաժիշտներ դիրիժոր Վալերի Փիրումյանը, ջութակահար Յուրի Ավետիսյանը:

*Պատրաստեց*՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ
*Երաժշտագետ,*
*«Երաժիշտ»ամսաթերթի*
*գլխավոր խմբագիր*

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

✦✦✦

Ռուսական ռոմանսի արվեստի պահպանման «Ռոմանսիադա» բարեգործական հիմնադրամը, «Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնը (ղեկավար Վահրամ Կարապետյան)՝ Հայաստանի Երաժշտական Ընկերության (նախագահ, ԵՊԿ պրոֆեսոր Դավիթ Ղազարյան), ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ, Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ-ի




*«Ռոմանսիադա» միջազգային մրցույթի ռեգիոնալ փուլի հանձնախմբի նախագահ՝ Դավիթ Ղազարյան, անդամներ՝ Գայանե Գեղամյան, Ռեբեկա Օջախյան, Վահրամ Կարապետյան, Գալինա Պրիոբրոժենսկայա (մրցույթի նախագահ), մրցույթի մասնակիցներ*

Տատյանա Հայրապետյանի անվ. համերգասրահում իրականացրեցին 2023 թ. երիտասարդ կատարողների «Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի Մոսկովյան միջազգային մրցույթի ռեգիոնալ փուլը:

Այս տարի հայկական ռոմանսները ոչ միայն հնչեցին հերթական մրցույթի ընթացքում, այլև հնարավոր դարձավ «Հայկական ռոմանսիադա»-ի համանախագահ Դավիթ Ղազարյանի և Վահրամ Կարապետյանի մտահղացումը տեսնել իրագործված. «Աստղիկ» հրատարակչությունը լույս ընծայեց հայ կոմպոզիտորների վոկալ կամերային գործերի «Հայկական ռոմանսներ» ընտրանի-ժողովածու:

«Հայկական ռոմանսիադա» 4-րդ մրցույթի երկու փուլերի արդյունքում դափնեկիրներ դարձան՝ 1-ին մրցանակ՝ Ռիտա Պետրոսյան (մագիստրոսական 2-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Ռեբեկա Օջախյան), Ֆերդինանդ Մուրադյան (ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի շրջանավարտ, ղեկ.՝ պրոֆ. Սվետլանա Կոլոսարյան), 2-րդ մրցանակ՝ Արփի Սինանյան (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Օլգա Գաբայան), Հովհաննես Օրդանյան (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Գայանե Գեղամյան), 3-րդ մրցանակ՝ Մերի Միսաքյան (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Սվետլանա Կոլոսարյան), Կարինե Աղաջանյան (մագիստրոսական 2-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Ռեբեկա Օջախյան): «Ռոմանսիադա» Մոսկովյան միջազգային մրցույթի եզրափակիչ փուլը կկայանա դեկտեմբերին:

✦✦✦

Նոյեմբերի 3-ին Ակուստիկ լաբորատորիայում Վարպետության դասով հանդես եկավ ժամանակակից կատարողական ու մանկավարժական արվեստի երևելի ներկայացուցիչ, մենակատար-ջութակահար, կամերային երաժիշտ,



*Ժան Միշել Արոյան, Լևոն Չիլինկիրյան*

դիրիժոր, Լոնդոնի թագավորական ակադեմիայի և Գիլհոլդի երաժշտության և դրամայի դպրոցի պրոֆեսոր Լևոն Չիլինկիրյանը: Երիտասարդ ջութակահարների համար նման հնարավորություն էր ստեղծել Տ. Մանսուրյանի անվ. կոմպոզիտորների միջազգային 2-րդ մրցույթը: Վարպետության դասին ներկայացան նաև ԵՊԿ ուսանողները՝ Ժան-Միշել Արոյան, 4-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Բագրատ Վարդանյան, կատարեց՝ Ս. Պրոկոֆևի ջութակի 2-րդ Կոնցերտի 1-ին մասը, Արևիկ Վարդանյան, 3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Էդուարդ Թադևոսյան, կատ.՝ Վ. Ա. Մոցարտի ջութակի 3-րդ Կոնցերտի 1-ին մասը, Իվանե Եսայան, 2-րդ կուրս, ղեկ.՝ դաս. Ա. Ասատրյան, կատ.՝ Յ. Ս. Բախի ֆուգան ջութակի 3-րդ Սոնատից:

Նշենք պրոֆեսոր Լևոն Չիլինկիրյանի վարպետության դասից մի քանի մեջբերումներ. Աղեղի ձեռքի արմունկը պետք է ամուր պահել: Օրինակ բերելով Յ. Հայֆեցին, նշում է, որ ջութակահարի համար լավ է՝ քիչ շարժվելը: Հիշեցրեց, որ Յ. Ս. Բախի ֆուգաները երգեհոնի համար են գրվել և յուրաքանչյուր թեման այլ ռեգիստրով է հնչում, հետևաբար, ամեն մուտքից առաջ պետք է դադար տալ: Վ. Ա. Մոցարտի ջութակի Կոնցերտում ղեկավարը մենակատարն է, իսկ առաջին տեղում՝ երգեցողությունն է: Խրախուսեց՝ փորձել նվագել սեփական կադենցիան: Հիշեցրեց, որ ամեն տրել պետք է ունենա վերջավորություն՝ նշելով, որ դրա մասին էր նաև գրել ջութակահարների համար կարևոր աշխատության հեղինակը՝ Լեոպոլդ Մոցարտը: Հորդորեց կարդալ նրա *“Versuch einer gründlichen Violinschule”* («Ջութակի նվագի հիմնարար դպրոց») գիրքը: Իվանե Եսայանի նվագից հետո Լևոն Չիլինկիրյանը նկատեց, որ երիտասարդ ջութակահարը լավ միտք ունի ու



*Ժան-Միշել Արոյան, Արևիկ Վարդանյան, Լևոն Չիլինկիրյան, Օվսաննա Հարությունյան, Իվանե Եսայան*

շատ լավ դասախոս կլինի, քանի որ գիտի՝ ուր է գնում: Բոլորին խորհուրդ տվեց չլարել վիզն ու կիրառել «Ալեքսանդր» տեխնիկա, որն օգնում է հաղթահարել կատարողի հուզմունքը և ազատվել ավելորդ լարվածությունից:

✦✦✦

Հոկտեմբերի 10-12-ը կայացել է *«Краснодарская камерата»* XII միջազգային կամերային երաժշտության բաց փառատոն-մրցույթը: Այս տարի *«Краснодарская камерата»*-ի հանձնախմբի նախագահը, բացման համերգին մասնակից մենակատարը և դաշնամուրի վարպետության դաս վարող մասնագետն էր ԵՊԿ Դաշնամուրային ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Իրինա Հակոբյանը: Վաստակաշատ մանկավարժը մի քանի տարի փառատոն-մրցույթի սպասված երաժիշտներից է՝ իր մասնակցությամբ ներկայացնելով Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան: 2001-ից գործող *«Краснодарская камерата»*-ն Կրասնոդարի Մշակույթի պետական ինստիտուտի նշանակալի




*Իրինա Հակոբյան*

նախագծերից մեկն է: Այն ստեղծել է ԲՈՒՀ-ի Կամերային անսամբլի և կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնը: Կամերային երաժշտության մրցույթ կազմակերպելու գաղափարի հեղինակը մրցույթ փառատոնի բազմամյա գեղարվեստական ղեկավարը ՌԴ Վաստակավոր արտիստ, դաշնակահար Տատյանա Սորոկինան է: Նրա մտահղացմամբ մրցույթը պետք է խթանի անսամբլային արվեստի զարգացումը, միավորի անսամբլիստ-մանկավարժներին ու նրանց աշակերտներին, դառնա այս գործի համախոհների համար հանդիպումների հարթակ: Տարբեր տարիներին այստեղ ելույթ են ունեցել ու հանձնախմբի նախագահ են եղել երկրի նշանակալի երաժիշտ-անսամբլիստներ («Ելենա Սորոկինա և Անդրեյ Բախչիև դուետը», «Բորոդին կվարտետը», ջութակահարներ Օլեգ Կրիսան, Գրաֆ Մուրժան և այլք): Հիմնադրման տարվան հաջորդող 12 փառատոն-մրցույթների ընթացքում կայացել է 49 համերգ, որոնցում հնչել է 150-ից ավելի կամերային ստեղծագործություն: Հոկտեմբերի 24-ի Կրասնոդարի Մշակույթի պետական ինստիտուտի ռեկտոր Սերգեյ Զենգինը նամակ էր հղել ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանին: Գրությունը շնորհակալական խոսք է՝ պրոֆեսոր Իրինա Հակոբյանին՝ բարձր պրոֆեսիոնալիզմի, ստեղծագործական համագործակցության, վարպետության դասից թողած մեծ հետաքրքրության համար:

✦✦✦

Դոմենիկո Սկարլատիի և Ջովանի Պերգոլեզիի ստեղծագործություններն ընդգրկված էին 1921 թ. դեկտեմբերի 22-ի՝ Երևանյան կոնսերվատորիայի պաշտոնական բացման օրվան նվիրված համերգին: Իտալացի կոմպոզիտորների գործերն ու իտալերենը 102 տարի անդադար հնչում է Հայաստանի բարձրագույն երաժշտական կրթօջախում: Հոկտեմբերի 20-ին Իտալիայի Հանրապետության Արտակարգ և լիազոր Դեսպան Ն. Գ. պարոն Ալֆոնսո Դի Ռիզոն իտալերեն լեզվի համաշխարհային շաբաթի առթիվ հյուրընկալվել էր մեզ՝ մասնակցելու հատուկ այդ օրվան նվիր-



*Իտալիայի Հանրապետության Արտակարգ և լիազոր Դեսպան Ն.Գ. պարոն Ալֆոնսո Դի Ռիզոն հյուրընկալվեց Երևանի պետական կոնսերվատորիա*

ված համերգին: Ներկայացել էին կոնսերվատորիայի ուսանողական տարբեր ուժեր: Մշտական է Իտալիայի դեսպանության աջակցությունը կոնսերվատորիայի ուսումնական կյանքում: Այստեղ են համատեղ ծրագրերը, ապահովում են իտալերենի գրականությամբ: Դեսպանը հետհամերգային պաշտոնական հանդիպման ընթացքում նշեց. *«Կարող եք վստահ լինել, որ համագործակցությունն Իտալիայի դեսպանատան հետ կշարունակվի, քանի որ Հայաստանի պարարտ հողը յուրահատուկ բնական հակում ունի դեպի արվեստ, երաժշտություն: Այսպիսի կապն ինքնաբերաբար է ստացվում և կլինի մշտական»:* Նա գնահատեց նաև կոնսերվատորիայի ուսանողների իտալերեն լեզվի մակարդակը: Ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց Հումանիտար գիտությունների ամբիոնի



*Աննա Ջալլադյան, Նարեկ Հարությունյան*

իտալերենի դասախոս Մառլեն Շահբազյանին Դեսպանի հրավերը կազմակերպելու համար և համերգային մասի պատասխանատու պրոֆեսոր Դավիթ Ղազարյանին: Հայտնեց, որ Ղ. Սարյանի անվ. Օպերային ստուդիայի ղեկավար Հասմիկ Պապյանը պայմանավորվածություն ունի Իտալիայի դեսպանատան օժանդակությամբ բեմադրել Ջոակինո Ռոսինիի «Սևիլյացի սափրիչը» օպերան:

*Պատրաստեց*՝ **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալֆրեդ Շնիտկեի անվ. Մոսկովյան պետական ինստիտուտի Դաշնամուրային արվեստի ամբիոնի Կոնցերտմայստերության բաժնի ղեկավար, Վոկալ դասարանի կոնցերտմայստեր, միջազգային մրցույթների դափնեկիր, մի շարք գիտական հոդվածների հեղինակ, դոցենտ Եվգինե Աղաբալյանցը 2019-2022 թթ. կազմել և հրատարակել է «Ալեքսանդր Սպենդիարյանի վոկալ ստեղծագործություններ» ուսումնամեթոդական չորս տետրերը» ժողո-



*<...>, Եվգինե Աղբալյանց, Վարվառա Հովհաննիսյան, Ծովինար Մովսիսյան, Գայանե Գեղամյան, Կարինե Բաղդասարյան, Տատյանա Դոխինա*

վածուները: Եվգինե Աղաբալյանցը մշտապես վարպետության դասեր է տալիս Բելգիայի *«Braine l'Alleud»* երաժշտական ակադեմիայում: Կոնցերտմայստերների միջազգային տարբեր մրցույթների հանձնախմբի անդամ է: Ակտիվ համագործակցում է համերգային գործունեություն ծավալող մեներգիչների հետ: Նրա սաները տարբեր մրցույթների դաշնամուրային նվագակցության անվանակարգերի դափնեկիրներ են: Օրեր առաջ Ա. Սպենդիարյանին նվիրված ուսումնական ձեռնարկները հարգարժան երաժիշտն



անձամբ նվիրեց ԵՊԿ Կ. Սարաջևի անվ. գրադարանին: Հանդիպմանը ներկա էին ԵՊԿ Գիտական գծով պրոռեկտոր դոցենտ Ծովինար Մովսիսյանը, գրադարանի վարիչ՝ դոցենտ Վարվառա Հովհաննիսյանը, Ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյանը և հյուրեր Ա. Շնիտկեի անվ. Մոսկովյան պետական ինստիտուտից: Ըստ Եվգինե Աղաբալյանցի, Ալեքսանդր Սպենդիարյանի վոկալ ժառանգությունը բաժանվում է չորս մասի՝ ռոմանսներ ձայնի և դաշնամուրի համար, ժողովրդական երգերի մշակումներ, վոկալ ստեղծագործություններ՝ նվագախմբի նվագակցությամբ, վոկալ անսամբլներ: «Ստեղծագործություններ ձայնի եվ նվագախմբի համար՝ դաշնամուրային փոխադրմամբ», կազմող՝ Ե. Աղաբալյանց, Մոսկվա, 2018թ.: *«Կոմպոզիտորը շատ դեպքերում դաշնամուրը դիտարկում է նվագախմբի նման: Այս անսովոր նյութի հետ ծանոթությունը երգչին ու դաշնակահարին հնարավորություն է տալիս արտահայտել մեկնաբանելու ունակությունները»,* - գրված է հատորի նախաբանում:

«Ռոմանսներ ձայնի եվ դաշնամուրի համար», կազմողներ՝ Ե. Աղաբալյանց, Ի. Կոտլյարևսկի, Մոսկվա, 2018 թ.: *«Դաշնամուրային խիտ, ենթաձայներով հագեցած ֆակտուրան, ռեգիստրային լայն ընդգրկումը թույլ կտա երգչի ու դաշնակահարի միջև կատարելագործել հնչունային հավասարակշռությունը: Ստեղծագործությունների երաժշտական լեզվի պարզությունն ու առաքինությունը կնպաստեն հասնել անբասիր ճաշակի»,* - նշված է հրատարակությունում:

«Ղրիմի թաթարների և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ», 2019 թ., կազմող՝ Ե. Աղաբալյանց: *«Կատարողներից պահանջվում է չափազանց ճշգրտություն, էմոցիոնալ մեծ ազատություն և արտահայտչականություն»,* - ընդգծել է կազմողը:

«Վոկալ անսամբլներ», կազմող՝ Ե. Աղաբալյանց, 2022 թ.: *«Այստեղ ժողովրդական երգերի հեղինակային մշակումներով դուետներ են, վոկալ կվարտետներ՝ դաշնամուրային նվագակցությամբ»*, - առանձնացնում է Եգ Աղաբալյանցը:

Ալեքսանդր Սպենդիարյանի վոկալ ստեղծագործությանը նվիրված այս ձեռնարկները կարևոր են մեներգիչների ուսումնական ու համերգային գործունեության համար:

## *Вышел в свет двуязычный сборник романсов и песен армянских композиторов*

**По инициативе Дома Москвы в Ереване вышел в свет двуязычный Сборник романсов и песен армянских ком–по–зиторов.**

**Произведения известных армянских композиторов теперь доступны на русском и армянском языках. 26 октября в МКДЦ "Дом Москвы" в Ереване состоялась презентация сборника "Романсы и песни армянских композиторов. Избранное", изданного Московским культурно–деловым центром и Музыкальным Обществом Армении при содействии Министерства образования, науки, культуры и спорта Республики Армения и издательства "Астхик" (профессиональный редактор Анна Казарян). По словам издателей, цель сборника – способствовать популяризации армянского романса среди широкой общественности Армении и России.**

***"Уже несколько лет как в Армении проходит "Армянская Романсиада" – региональный этап Международного конкурса исполнителей русского романса "Романсиада". И за это время программа, организованная Московским культурно–деловым центром "Дом Москвы" в Ереване и Благотворительным фондом сохранения искусства рус–ского романса "Романсиада", уже успела стать известной как среди музыкантов, так и широкой общественности. За время проведения "Армянской Романсиады" у нас с председателем Музыкального общества Армении, профессором Ереванской государственной консерватории им. Комитаса и сопредседателем конкурса Давидом Казаряном возникла идея издать книгу "Армянские романсы", где будут собраны и переведены на русский язык лучшие произведения армянских композиторов",*** **– рассказал генеральный директор МКДЦ "Дом Москвы" в Ереване Ваграм Карапетян.**

***"Во время проведения конкурса "Армянская Романсиада" я предложил включить в конкурсную программу исполнение армянских романсов. Моя идея получила одоб–рение со стороны создателя и художественного руководителя "Московской Романсиады" Галины Преображенской. Но когда армянские конкурсанты начали готовиться, выяснилось, что для того, чтобы найти тот или иной армянский романс, им придется день или два провести в библиотеках. И тогда генеральный директор Дома Москвы в Ереване Ваграм Карапетян предложил выпустить сборник армянских романсов, что стало возможным благодаря готовности и стараниям нашего хорошего друга, руководителя издательского дома "Астхик" Сурена Чунгуряна. В сборнике, названном "Избранное", поместилась лишь малая часть армянских романсов, но мы полны надежд, что в будущем будут изданы и другие произведения этого жанра",*** **– в свою очередь отметил Заслуженный деятель культуры РА, председатель Музыкального общества Армении, профессор Ереванской государственной консерватории им. Комитаса, сопредседатель конкурса "Армянская Романсиада" Давид Казарян.**





***Сурен Чунгурян, Ваграм Карапетян, Давид Казарян***

**Коснувшись издания сборника, учредитель и директор издательского дома "Астхик" Сурен Чунгурян подчеркнул, что был рад стать частью подобного важного для развития жанра проекта:** ***"Мы давно и плодотворно сотрудничаем с Музыкальным обществом Армении и наше издательство с готовностью откликнулось на столь нужную для нашего музыкального мира инициативу Дома Москвы в Ереване и Музыкального общества Армении. Должен сказать, что за довольно сжатые сроки была проделана огромная работа и, думаю, нам удалось представить достойное издание".***

**Представляя историю возникновения и становления армянского романса, выступающие отметили, что к этому жанру обращались и продолжают обращаться почти все представители армянской композиторской школы, от старшего поколения до молодежи. Армянский романс зародился во второй половине XIX века. Первыми авторами армянских романсов были Т. Чухаджян, Г. Еранян, Г. Горганян, А. Маилян, А. Тигранян. Стилистической основой его романсов была армянская городская лирическая песня. А в первые два десятилетия XX века благодаря А. Спендиаряну и Р. Меликяну сформировался, утвердился и состоялся армянский классический романс.**

**В послевоенные десятилетия к жанру романса стали обращаться чаще, особенно это проявилось в произведениях композиторов А. Тер-Гевондяна, А. Степаняна, Э. Мирзояна, А.Арутюняна, В.Котояна, Э.Абрамяна, Г.Читчян, А.Тертеряна, Т. Мансуряна. Они сформировали свой особый стиль, музыкальный язык и создали ценные художественные произведения.**

**Армянский романс вступил в новый этап, композиторы обратились к поэзии армянских поэтов, среди которых произведения А. Исаакяна, С. Капутикян, П. Севака, О. Шираза, Н. Кучака и Е. Чаренца.**

***https://www.facebook.com/dom.moskvy.yerevan/posts/pfbid02CXBWLb7RkVwuuUMmnrgV6Hhf2GB5txJKvrfAQkb93ngxD2jCcnt8yaU6K42DQoyul***

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

❖ *«Welcome to Canada 2023»* միջազգային փառատոն-առցանց մրցույթի «Երգչախմբային արվեստ» անվանակարգում 1-ին մրցանակի է արժանացել **«Պատարագ» երգչախումբը,** գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ դոցենտ Մարգարիտ Ոսկանյան: Երաժիշտները ներկայացրել էին Արզաս Ոսկանյանի «Հայր մեր»-ը «Պատարագ»-ից և Քրիստափոր Կարա-Մուրզայի «Գացեք-տեսեք» խմբերգը: «Պատարագ» երգչախումբը Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի 24-ամյա ուսումնական երգչախումբն է: 1999 թ. ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր Հենրիկ Սմբատյանի առաջարկով ամբիոնի կրթական ծրագրում ներառվեց «Երգչախումբ» դասընթացը: Նրա առաջարկով խմբավար հրավիրվեց խմբավարական բաժնի շրջանավարտ Մարգարիտ Ոսկանյանը: «Պատարագ»-ը մասնակցել է բազմաթիվ համերգների: Երգչախմբի կենսագրության համար առանձնահատուկ է պրոֆեսոր Արզաս Ոսկանյանի ՀՀ Պետական մրցանակի արժանացած «Պատարագ»-ը: Հայտնի է, որ երգչախմբում երգելը մարդու գրագիտության ու մշակույթի ցուցիչ է, իսկ նման դասընթացը Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի յուրաքանչյուր ուսանողին հնարավորություն է տալիս ճանաչել ազգային ու կոմպոզիտորական ավելի լայն ժառանգությանը, իսկ որպես երգչախմբի մասնիկ, պատասխանատու լինել մարդկային ու մասնագիտական ամենատարբեր դրսևորումներում:

*Պատրաստեց՝* **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**
*Նյութը վերցված է*
*https://www.facebook.com/YerevanStateConsevatory*
*էջից*

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու),
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 25.11.2023:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

0001, ք. Երևան, Սարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

